

21.245

33

2-85

15 JAN 2010

ՀԱՄՈ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

50

4 Ա Պ Ի Տ Ա Լ Ի Ջ Մ Ի
Ա Ն Հ Ա Վ Ա Ս Ա Ր Ա Չ Ա Փ
Ջ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն
Հ Ա Ր Ց Ի Թ Ո Ւ Ր Ջ Ը

53
-85

Պ
Ե Տ Ն Ր Ա Ց
Ց Ե Ր Ե Վ Ա Ն
1 9 3 5

33
2-85

05 FEB 2007

ՀԱՄՈ ՇՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ
ԱՆՅԱՎԱՍԱՐԱԶԱՓ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՏԵՐԵՂԱՆ

1985



13.06.2013

21.245

Տեխ. խմբ. Տ. Խաչվանէյան
Սրբազոյի՛ Ս. Շահբազյան

Պետերասի տպարան
Ֆրավլկա 235. պատվեր 715.
հրատ. 3338 տիրած 2000



24433-59

Կապիտալիզմի պայմաններում առանձին ձեռնարկութիւններէ, ճյուղերի և յերկրներէ անհավասարաչափ զարգացումն ընդհանրապես, վորպես ակնառու եմպիրիկ փաստ, հաղիվ թե կարող է վեճի առարկա դառնալ վորևէ մեկի կողմից: Այդ փաստն այնքան շոշափելի չէ, վոր առանձին ջանք չի պահանջվում ընդունելու համար: Ուստի զարմանալի չէ, վոր հենց բուրժուական տնտեսագետները մոտ, սկսած արժանահարգո լիբերալ Հորսոնից և վերջացրած Փաշլիգմի թեևի տակ աշխատող Բեռլինի Կոնյուկտուրային ինստիտուտի տնտեսագետներով, կարելի չէ դտնել բազմաթիվ պերճախոս նյութեր, վորոնք կապիտալիզմի անհավասարաչափ զարգացումն են ցույց տալիս և ասացուցում: Սակայն այստեղ ևս բուրժուական տնտեսագետները դժբախտութիւնն այն է, վոր նրանք իրենց նեղ մտահորիզոնով ուղղակի անկարող են տեսականորեն ըմբռնել այդ կարգի սոլյալները, վերջիններից բոլոր բոլոր յեղրակացութիւններէ հետ միասին:

Ամեն կերպ գտնել, անդիտանալ կապիտալիզմի ճակատադրի համար այս պրորբեմի ունեցած եյական նշանակութիւնը, չտեսնել նրա մեջ հատուկ կապիտալիստական վոչ մի առանձին բան, անհավասարաչափ զարգացումը կապիտալիզմի որևնք վորակելու համար չընդունել և վոչ մի հիմք—ահա ի՛նչն է բնորոշում ամեն գուշնի քողարկված կամ մերկապարանոց ապուրգետների ընդհանուր դիրքը: Նրանք պատրաստ են որևնք համարելու անհավասարաչափ զարգացումը, սակայն նրա պատճառանության բոլոր կողմերը վոչնչացնելու պայմանով, որևնք, սակայն վոչ կապիտալիզմին հատուկ, այլ մարդկային բոլոր հասարակութիւնների համար հովիտենական և անփոփոխ: Յեվ

դա հասկանալի չէ, Վորովհետեւ «վոչ մի բան այնքան բնորոշ չէ բուրժուալի համար, քան ժամանակակից կարգերի դժերը բոլոր ժամանակները և ժողովուրդները վրա փոխանցելը» (Լենին, «Сочинения» հատ. I, էջ 73) :

Ահա այս տեսակետից յերբեք պատահական չէ, Վոր ամենաստոր ապուրդեա, հակահեղափոխական Տրոցկին դնաց հենց այդ վերջին դժով: Տակաւին 1915 թվին իր «Новый голос»-ում, առաջնորդ կապիտալիզմի անհավասարաչափ զարգացման որենքի լենինյան մեկնարանության դեմ, գեւ իր «Февральская революция»-ի մեջ հայտարարելով այս որենքը վորպես «առավել ընդհանուր որենք պատմական պրոցեսի» (Լ. Տրոցկի, «Февральская революция», էջ 22), նա կոմունիստական ինտերնացիոնալի Գործկոմի 7-րդ պլենումում այս վերջին կետից էլ սկսեց իր փորձերը՝ նվազեցնելու և փաստորեն բացատրելու այդ որենքի նշանակութունը: Նա այստեղ, անամոթաբար թաղնվելով Լենինի թիկունքում, փորձում էր հերքել հենց Լենինի այն դրույթը, թե՛ «տնտեսական և քաղաքական զարգացման անհավասարաչափութունը կապիտալիզմի անպայման որենքն է» (հատ. XVIII, էջ 232): Ըստ Տրոցկու, «անհավասարաչափ զարգացման որենքն իմպերիալիզմի որենքը չէ, դա մարդկային ամբողջ պատմության որենքն է» («Пути мировой революции», էջ 99) :

Բուրժուազիան ինչո՞ւ չպետք է յերկու ձեռքով ստորագրի Տրոցկու այսպիսի դրույթի տակ. չէ՞ վոր դա ըստ էյության կոչված է սպեցիֆիկ կապիտալիստական որինաչափութունները, հետևապես նաև կապիտալիզմը, համարժայնելու կամ նրա հավերժացման պատրանք ստեղծելու:

Սակայն քննենք բուրժուա-արոցկիստական այս լարախաղացութունը նրա մեթոդոլոգիական հիմքերի տեսակետից:

Յեթե մետաֆիզիկի «ոխկով» սահմանափակվեմք յերևույթների և փաստերի մեջ ընդհանուրը փորձնելով ու առանձնացնելով, այն ժամանակ այդ փաստերն ու յերևույթներն անխուսափելի կերպով դուրս են դալիս նման, ալիլին՝ միանդամայն նույնը: Ահա թե ինչու Մարքսը խստորեն դեմ էր դուրս դալիս հա-

սարակական յերևույթները և որինաչափութունների քննության այդպիսի ձևերին, մեղկացնելով բուրժուական տնտեսագետների մեթոդոլոգիայի ամբողջ ապուրդեալի աստանը:

Մարքսն, իհարկե, չէր ժխտում ընդհանուրի կատեգորիայի որյեկտիվ նշանակութունը, սակայն նա այդ ընդունում էր միայն առանձնահատուկի հետ միասնաբար: «Քաղաքատնտեսության քննադատության շուրջը» աշխատության մեջ Մարքսն ուղղակի ընդունում է «արտագրութուն ընդհանրապես» արդարակցիայի «իմաստը» (տե՛ս «Քաղաքատնտեսության քննադատության շուրջը», էջ 11) և որինակ՝ «Կապիտալ»-ի I հատորի 5-րդ գլխում ինքը քննում է աշխատանքն ընդհանրապես: Սակայն նա այդ ամենն անում է նրա համար, վորպեսզի ալիլի պարզ ցույց տա և ընդդժի կապիտալիստական արտագրության առանձնահատուկութունը, կապիտալիզմի ժամանակ աշխատանքային գործունեյության հասարակական ձևի սպեցիֆիկ յինելը: Այլ կերպ՝ «կարող են առաջադրվել միայն ընդհանուր դրույթներ և բոլոր պատմական տարբերությունները կարող են... խառնվել և ջնջվել համամարդկային որենքների մեջ» («Քաղաքատնտեսության քննադատության շուրջը», էջ 13) :

Ծիշտ նույն կերպ՝ ինչպես արոցկիները զարգացման անհավասարաչափության որենքը հայտարարում են վորպես համարդկային որենք, կարելի չէ, որինակ, աշխատանքի բաժանումն ևս համարել այդպիսին: Նման փորձ կատարել է Պրուդոնը, արժանանալով Մարքսի սուր ծաղրանքին: «Աշխատանքի բաժանումը, — գրում էր Մարքսը, — պարոն Պրուդոնի կարծիքով համարական որենք է, հասարակ և մեղացական մի կատեգորիա: Նա հետևապես արքարակցիայի, իդեայի, խոսքի մեջ պետք է գտնի պատմության տարբեր դարաշրջաններում յեղած աշխատանքի բաժանման բավարար բացատրությունը: Կաստաները, ցեխերը, մանուֆակտուրան և խոշոր արդյունաբերությունը պետք է բացատրվեն մի բառով՝ բաժանում: Լավ ուսումնասիրեցեք «բաժանել» բառի իմաստը և դուք կարիք չեք ունենա այլևս հետազոտելու այն բազմաթիվ ազդեցութունները, վորոնք յուրաքանչյուր դարաշրջանում աշխատանքի բաժանմա-

նը տալիս են վորոշակի բնույթ» («Ницета философии», ԵՊ 119): Պրուդոնը խաղում էր «բաժանել» բառի հետ, իսկ Տրոց-կին խաղում է «անհավասարաչափ» բառի հետ: Ի՞նչ տարբերու-թյուն կա այստեղ և ինչո՞վ ավելի տախիակամիտ է Տրոցկու մետաֆիզիկական արատրակցիան Պրուդոնի նույնանման արքա-տրակցիայից:

Պեղանտ Տրոցկին այնքան փութաձանորեն վորոճալով դար-դացման անհավասարաչափության «ընդհանուր», «մարդկային պատմության» որենքի թեզը, իհարկե, բնավ չէր ընդդժում դարդացման անհավասարաչափության առանձնահատկություն-ները կապիտալիզմի ժամանակ ընդհանրապես ու նրա իմպերիա-լիստական, վերջին շրջանում մասնավորապես և չէր ել ուղում մտածել այդպիսի ընդդժման անհրաժեշտության մասին: Ընդ-հակառակը, ինչպես կտեսնենք հետագայում, դարդացման ան-հավասարաչափությունն առաջ քաշելով վորպես համամարդ-կային որենք, Տրոցկին դրանով իսկ ամեն կերպ ձգտում էր դի-մադուրի դարձնել կապիտալիզմի անհավասարաչափ դարդաց-ման որենքը, նվազեցնել կամ արհամարհել նրա ելությունը և նշանակութունը, նրա գործողությունը և հետևանքները մոնո-պոլիստական կապիտալիզմի ժամանակ:

Անկասկած է, վոր կապիտալիզմին նախորդող հասարակա-կան-տնտեսական ֆորմացիաներին նույնպես խորթ չէր դար-դացման անհավասարաչափությունը: Անտիկ աշխարհում իրենց տնտեսության ու կուլտուրայի դարդացման աստիճանով աչքի էլին ընկնում Աթենքը, Հռոմը և այլն: Յեվ ահա, յեթե աչքա-թող անենք սվյալ հասարակական ֆորմացիայի բնորոշ կողմե-րը — արտադրության յեղանակը և նրա վրա հիմնվող ստրկա-տիրական կարգերի դասակարգային կառուցվածքը, յեթե նկա-տի չունենանք, վոր արտադրողական ուժերի դարդացման ցածր աստիճանով պայմանավորվում էր այն չափազանց ուժեղ ազդեցութունը, վոր ունեյին աշխարհագրական պայմաններն աշխարհիս տարբեր բնակված կետերի անհավասարաչափ դար-դացման վրա, ապա, իհարկե, միանգամայն անկարելի յե ըմ-բռնել այդ անհավասարաչափության ամբողջ առանձնահատ-կությունը:

Որինակ՝ վերցնենք հին Հռոմը: Արտադրողական ուժերի դարդացման այն ժամանակվա պայմաններում Հռոմի աշխար-հադրական շիրքը շատ հարմար էր առևտրական հարաբերու-թյունների դարդացման և նվաճողական պատերազմներ մղելու տեսակետից, պատերազմներ, վորոնք հնարավորություն էյին տալիս Հռոմին ապահովելու իրեն մեծ քանակությամբ ստրուկ-ներով: Սակայն յերբ ստրկական աշխատանքի վրա հիմնված հսկայական լատիֆունդիաները քայքայեցին Հռոմի ռազմական հզորության պատվանդան հանդիսացող ազատ հողագործներին, այն ժամանակ հռոմեական կայսրությունը թուլացավ. նա այլ-ևս չէր կարող հաղթական պատերազմներ մղել ստրուկներ հա-վաքելու համար և, վերջիվերջո, ստիպված յեղավ տեղի տալ մեր ժամանակակից բարբարոսներ հիտլերների և գյորինգների նախահայրերի — դերմանական հորդանների առաջ:

Ահա՛ յեթե այս կարգի բոլոր հանգամանքները, վորպես դոյություն չունեցող, թողնենք մի կողմ և այդ ճանապարհով ձեռք բերված անհեթեթ, վոչ-դիտական արատրակցիան դարձ-նենք արտոլյուտ, հրամցնենք վորպես համամարդկային որենք և տարածենք բոլոր հասարակական-տնտեսական ֆորմացիաների վրա, այն ժամանակ մեզ պարադոքսալ կթվա, թե ինչո՞ւ մենք կարող ենք խոսել և պետք է խոսենք կապիտալիզմի անհավա-սարաչափ դարդացման հատուկ որենքի և որյեկտիվորեն նրա հետ կապված ու նրանից բղխող յեզրակացությունների մասին:

Վերևում մենք արդեն մատնանչեցինք, վոր բոլորովին պա-տահական չէ հակահեղափոխական Տրոցկու ձգտումը՝ բացասել կապիտալիզմի անհավասարաչափ դարդացման հատուկ որենքը: Բոլոր ռենեգատներն այս կամ այն ճանապարհով աշխատում են հաշվ տեսնել այդ տնտեսական որենքի հետ, ամենից առաջ այդ հավիտենական որենք դարձնելու մտադրությամբ: Յեվ այդ հասկանալի յե, վորովհետև, ինչպես մենք ցույց կտանք իր տեղում, այդ որենքը վոչ մի կերպ չի կապակցվում ուլտրա-լիմպերիալիզմի ապոլոգետիկ դառանցանքների հետ:

Վերցնենք հենց կառուցիկոն՝ ռենեգատների գաղափարական ներշնչողին ու առաջնորդին. նա իր բազմաթիվ աշխատություն-ներում կամ բոլորովին գանց է առնում այդպիսի որենքի գո-

ահա հասարակական որինաչափությունները դիպելկտիկական-մատերիալիստական հասկացողութեան հիմնական գրույթները մի բան, վոր յերբեք չեն կամենում հասկանալ որոցիկները և կատուցիկները պես խակական մետաֆիզիկները:

Վորո՞ճարով այն ընդհանուր տեղին, թե դարգացման անհավասարաչափությունը հատուկ է մարդկային ամբողջ պատմութեանը և կամ բնութեան հավիտենական մի որենք հայտարարելով անհավասարաչափ դարգացումը՝ այդ հիման վրա բացասել կապիտալիզմի անհավասարաչափ դարգացման հատուկ որենքը—եւ ուրիշ ի՞նչը կարող է ավելի վատ լինել և ի՞նչը կարող է առաջ բերել ավելի մեծ, արդարացի արհամարհանք:

Չե՞ վոր նույն չափով կարելի չէր հավերժացնել արժեքը (ի միջի ալոց՝ այս ասպարիզումն էլ բավականաչափ շատ են ջանք թափողները): Մի՞թե արժեքը հրապարակ չէր դալիս կապիտալիզմից շատ առաջ, ճիշտ է, պատահական կերպով (СПОРАДИЧЕСКИ), ինչպես պատահական էր ինքն ապրանքափոխանակությունը: Յեւ մի՞թե այդ փաստը խանդարում է մեզ արժեքի որենքը նկատել վորպես արտադրութեան կապիտալիստական յեղանակի շարժման որենք: «Այստեղ պարզվում է, — գրում էր Մարքսը, — թե ինչպես անգամ արտադրութեան ավելի վաղ յեղանակներին վերաբերող տնտեսական կատեգորիաներն արտադրութեան կապիտալիստական յեղանակի հիման վրա ընդունում են առանձնահատուկ կերպով տարբեր պատմական բնավորութիւն» («Չհրապարակված ձեռագրեր», «БОЛЬШЕВИК» № 56, էջ 81, 1932 թ.):

Թեպետ և դարգացման անհավասարաչափությունը հավասարապես նույն կերպ գոյութիւն է ունեցել նաև այլ հասարակական—տնտեսական Ֆորմացիաներում, այնուամենայնիվ նա հանդիսանում է կապիտալիզմի որենքը և դրա մեջ վոր մի առանձին հանելուկային բան չկա հասարակական որինաչափությունների գիպելկտիկական — մատերիալիստական հասկացողութեան տեսակետից: Յեւ և՛, ով չի կամենում հասկանալ այս ճշմարտութիւնները, նա գերադասում է կանգնել համամարդկային որենքներ ստեղծագործելու մակարդակի վրա: Նա առաջիկ է և, իհարկէ, չի կամենում նույնիսկ լսել այն մասին, վոր

անհրաժեշտ է կապիտալիզմի անհավասարաչափ դարգացման որենքը վերցնել շարժման, փոփոխութիւնների և արտահայտութեան առանձնահատուկութեան մեջ, համաձայն կապիտալիզմի դարգացման հաջորդական ետապներին:

II

Բուրժուազիայի աղենա Տրոցկին մի անգամ ընդմիջում վճռել էր կատարել բուրժուազիայի սոցիալական պտուղերը և վորնչիտառաջ կանչ չառնել բացասելու համար կապիտալիզմի անհավասարաչափ դարգացման որենքի նոր վորակն ու նշանակութիւնը իմպերիալիզմի շրջանում: Եւ ինչպիսի՞ ավելի պատշաճ թիկնապահներ կարող էր ճարել իրեն Տրոցկին, քան յեթե Զինովյեվ կամենեմքերի նման յեփված շորեյկերեխերները:

Յեւ և՛ Տրոցկին ու նրան ծառայողոված Զինովյեվը, նպատակադրելով սքողելու կապիտալիզմի անհավասարաչափ դարգացման որենքի առանձնահատուկութիւններն իմպերիալիզմի շրջանում, XV կուսկոնֆերանսում և կոմունիստական Ինտերնացիոնալի Գործկոմի VII պլենումում բարձրացրին անասելի աղմուկ, վոր իբր թե կուսակցութիւնն անտեսում է այս որենքի առկայութիւնը և դործողութիւնը նախաիմպերիալիստական դարաշրջանում, կլասիկ կապիտալիզմի ժամանակ: Սա, իհարկէ, զրպարտութիւն է և սուտ: Կուսակցութիւնն անվիճելի նախադրանքներ կարող դարձնել իսկ յեթե այդ «զպրոցականները», — ինչպես նկատեց ընկ. Ստալինը, — մարքսիզմի հիմնադիրները կատարած մեջբերումներով կամենում էլին կրկին Ամերիկա դառնել, — այդ արդեն ուրիշ բան է:

Իմպերիալիզմը՝ վորնչ, կապիտալիզմ չէ, այլ միայն վերջին ետապը կապիտալիզմի դարգացման: Այս տեսակետից իմպերիալիզմի բոլոր որինաչափութիւններն իրենց արմատներն առնում են արտադրութեան կապիտալիստական յեղանակի ամենախորը ընդերքից, հիմնվում են կապիտալիզմի հակասական շարժման և դարգացման վրա: Անհավասարաչափ դարգացման որենքը հենց նրանով է հանդիսանում կապիտալիզմի որենք, վոր չի ծագել մի ակնթարթում և պատահականորեն, այլ իմա-

յությունը, կամ՝ ձեռքից վոչ մի առիթ բաց չի թողնում, վորպեսզի դրչի մի հարվածով վոչնչացնի նրա նշանակութունը, նկատելով այն վորպես վոչ հատուկ, վոչ-լիմաննա կապիտալիզմին:

Ազրարային հարցի վերաբերյալ իր վաղեմի վորոշ աշխատությունների մեջ Կառլեյկին ընդհանուր առմամբ կարծես թե աշխատում էր ճիշտ մոտենալ արդյունաբերության և գյուղատնտեսության անհավասարաչափ դարգացման բացատրությանը, կապիտալիզմի ժամանակ գյուղատնտեսության հետ մնալու ինդերին, կարծես թե ուզում էր քայել իր պատանեկության շրջանի մայթուսական մեղքերը: Սակայն այդ ամենը նա մուսացության ամեց իր ունեգատական շրջանը բոլորելիս:

Կառլեյկին այս անգամ սկսեց խիստ բնագիտություն բացատրել գյուղատնտեսության հետ մնալու փաստը կապիտալիզմի շրջանում: Որինակ, իր «Միլիանսական կապիտալ և ճգնաժամերը» հոդվածում նա գրում է. «Գյուղատնտեսական արտադրության ընդարձակումը տեղի յե ունենում միանգամայն այլ պայմաններում, քան արդյունաբերական արտադրության ընդարձակումը և հատկապես մեքենաների գործածության ժամանակից սկսած՝ պայմանների մեջ յեղած այդ տարբերությունն էլ ավելի յե մեծանում: Արդյունաբերությունը կարող է միշտ ավելի արագ զարգացնել իր արտադրությունը, իսկ գյուղատնտեսության ընդարձակման տեմպը հետ է մնում, վարավիետև վերջինս գործունի կենդանի սրգանիզմների հետ, չի կարող փախափախանալ արագացնել նրանց բարձրացումը և անը...» (ընդգծումը մերն է. չ. չ.): Նույն միտքը, միայն ավելի քողարկված ձևով, Կառլեյկին արտահայտում է իր սոցիալ-ֆաշիստական մոտեմենտը հանդիսացող «Պատմության մատերիալիստական ըմբռնողությունը» գրքում: «Գյուղատնտեսությունը, — գրում է նա, — սուկ բնական պատմաբաներով արդեն ի վիճակի չե գարգանալու արդյունաբերության պես արագ: Սրան ավելանում է նաև այն հանգամանքը, վոր մինչև այսօր կապիտալը հոսել է դեպի գյուղատնտեսությունն ավելի դանդաղ, քան դեպի արդյունաբերությունը» (ոուս. հրատ. էջ 552):

Յեթե նկատի ունենանք, վոր Կառլեյկին գյուղատնտեսության հետ մնալու վերաբերյալ իր բացատրությունների փաստարկումն

սկսում է «բնական պատճառներից», այս պարզ է դառնում, վոր նրա վերջին ֆրազը միայն աչքը թող փչելու համար է, վոր նա իրականում հաստատվել է նորից իր հինախորհրդ հոգեհոր՝ Մարքուսի դրկում: Չե՞ վոր սահմանափակվել միայն այն փաստի ընդգծմամբ, թե դեպի գյուղատնտեսությունը դանդաղ է հոսում կապիտալը, առանց լուսարանելու այդ փաստի սոցիալատնտեսական հիմքը, այդ միևնույն է, թե վոչինչ չառել:

Կապիտալը դանդաղ է հոսում դեպի գյուղատնտեսությունը, վորովհետև գյուղատնտեսությունն ունեն այնպիսի արդեւակներ, ինչպես սին և սենտան է, առաջին հերթին՝ արտույտ աճնաճան: Հողերի ազդայնացման արտադրական հնարավորությունը և այդ հիման վրա բացարձակ սենտայի վոչնչացումը կապիտալիզմի շրջանակներում չի կարող իրականություն դառնալ, վորովհետև կապիտալն իր շվաքից վախենում է, նա չի համարձակվում ձեռք բարձրացնել մասնավոր սեփականության դեմ, թեկուզ հենց այդ սահմաններում, չնայած վոր դա նրա համար ձեռնառու էր ինքնը. իսկ հողային և կապիտալիստական մագնատների անձնական կապն ու միությունը հանդես են գալիս վորպես լրացուցիչ փաստարկում, վորը խոսում է նման սիսկից հրաժարվելու ոգտին: Հասկանալի յե, իհարկե, վոր այդ ամենի մեջ «բնական պատճառները» գործ չունեն, չնայելով Կառլեյկու բոլոր հախախտումներին:

Կառլեյկու մյուս, ավելի բացահայտ գինակիցները, ինչպես որինակ, սոցիալ-ֆաշիստական անվանի ազրարապես Բասադեն, ուղղակի և բացահայտորեն կանդնում են «հողի նվազող բերբության» սուս որենքի հին, բրբրված դրոշի տակ, մի որենք, վորն այնքան խոտորեն ժխտեց Մարքսը:

Կառլեյկու ի՞նչ գործն է, վոր ֆեոդալիզմի ժամանակ բոլորովին այլ կերպարանք ուներ գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացման անհավասարաչափությունը, վոր այն ժամանակ գյուղատնտեսությունն իր արտադրողականությամբ առաջ էր մանր արհեստային արդյունաբերությունից և վոր արտադրողականության զարգացման տեմպում միայն խոշոր կապիտալիստական արդյունաբերությունը շատ հետ թողեց գյուղատնտեսությունը: Այդպիսի փաստը թելադրում է պատմակա-

նորեն մոտենալ ամլյալ յերեւոյթին, վորպեսզի կարելի լինի ճիշտ կերպով պարզել, թե ինչո՞ւ միլենույն բնական պատճառները Ֆետդալիզմի և կապիտալիզմի ժամանակ տրամադծորեն հակառակ ներդրծութուն ունեյին արդյունաբերության և դյուղատնտեսության զարգացման տեմպի վրա:

Ֆետդալական հասարակության արտադրողական ուժերի հենց ցածր աստիճանն էր, վոր դերադասություն էր տալիս դյուղատնտեսությանն այն ժամանակվա արդյունաբերության համեմատությամբ: «Արտադրության կապիտալիստական յեղանակի զարգացման ցածր աստիճանում, — գրում էր Մարքսը, — հողագործությունը հանդիսանում է ավելի արտադրողական, քան արդյունաբերությունը, վորովհետև այստեղ աշխատանքի մեջ բնությունն է, վոր մասնակցում է վորպես մեքենա և որդանիզմ, մինչդեռ արդյունաբերության մեջ բնության ուժերը գրեթե ամբողջությամբ պետք է դեռևս փոխարինվէյին մարդկային ուժով...» («Теории прибавочной стоимости» հատ. II, առաջին մաս, էջ 191):

Կառուցելին, սակայն, վոչ մի կերպ չի կամենում կանգնել այդպիսի կոնկրետ-պատմական հողի վրա՝ դյուղատնտեսության և արդյունաբերության անհավասարաչափ զարգացման պատճառները բացատրելիս: Չե՞ վոր այն ժամանակ նա ստիպված պետք է լինի փնտնել դյուղատնտեսության հետ մնալու պատճառները կապիտալիզմի ժամանակ, նրա սպեցիֆիկ, մասնավոր-սեփականատիրական հարաբերությունների մեջ և, հետևապես, ընդունել, վոր հենց «արտադրության բուրժուական յեղանակին է հատուկ ավելի արագորեն զարգացնել արդյունաբերությունը, քան հողագործությունը» («Теории»..., II հատ., առաջին մաս, էջ 176): Իսկ այդ կնշանակեր վորոշակի տուրք տալ, թեկուզ այդ դծով և այդ սահմանում, կապիտալիզմի անհավասարաչափ զարգացման հատուկ որենքի որյեկտիվ նշանակությանը: Յե՞ վ ահա կառուցելին, բուրժուազիայի այդ զառամյալ դամփուր, ամեն կերպ ճիգ է թափում ցատկել բուրժուազիայի համար այնքան անցանկալի այդ որենքի վրայից, նրան չկապակցելով արդյունաբերության և դյուղատնտեսության ան-

հավասարաչափ զարգացումը և ամուր կերպով կառչելով «բնական պատճառներին»:

Ռենեդատների աջքակապությունն այստեղ բոլորովին դըժվար չէ յերևան հանել: Նրանք անտես են առնում, արհամարհում են մարքսիզմի հիմնադիրների այն բաղմաթիվ ընդդծումները, թե ինչպես հասարակական որինաչափությունները, այնպես էլ «բնական պատճառները» — բնության որինաչափությունպես էլ «բնական պատճառները» — բնության որինաչափությունները, պետք է վերցնել վոչ թե իրենց ստատիկ վիճակում, այլ շարժման և փոփոխության մեջ: Նրանք այնուհետև չկամենալով հաչլի առնել, վոր անթույլատրելի յե նույնացնել կամ փոխարինել մեկը մյուսով բնության և հասարակության վորակապես տարբեր որինաչափությունները, իրենց սարքած հալիտենապես «անփոփոխ» բնության որենքներով բացատրում են հասարակական յերեւոյթները, ինչպես, որինակ, ամլյալ դեպքում, արդյունաբերության և դյուղատնտեսության զարգացման անհավասարաչափությունը կապիտալիզմի ժամանակ:

Ենդեղը հենց այդպիսի ապուղեւտների դեմ էր գրում, թե «մեղ համար այսպես կոչված «տնտեսական որենքները» բնության հալիտենական որենքներ չեն, այլ հանդիսանում են պատմական որենքներ, վորոնք ծագում են և անհետանում: Ժամանակակից քաղաքատնտեսության կողքը, ինչ չափով վորտնտեսագետները կաղմել են այն որյեկտիվորեն ճիշտ, մեղ համար հանդիսանում է միայն այնպիսի որենքների և պայմանների ժողովածու, վորոնց որոք ժամանակակից հասարակությունը կարող է գոյություն ունենալ: Մի խոսքով, սա բուրժուական հասարակության վերացական արտահայտությունն է, ուղղում են (հանրագումարը) նրա արտադրության և փոխանակության պայմանների» («Письма Маркса и Энгельса», էջ 162):

Չնույնացնել հասարակական զարգացման որենքները բնության որենքների հետ, մոտենալ նրանց խիստ պատմականորեն, վերցնել դրանք իրենց փոփոխության և զարգացման մեջ, յերբեք աջքաթող չանել, վոր յուրաքանչյուր հասարակականտնտեսական ֆորմացիա ունի շարժման իր հատուկ որենքները —

նենտ ե կապիտալիզմին, ունհրաժեշտութիւնն ե արտադրութեան տվյալ յեղանակի շրջանում :

Տրոցկին ճշում եր, Վոր «Մարքսը ե Ենդելսն այդ անհավասարաչափութեան մասին մեզնից պակաս չգիտեն» (Մղադրական հաշվետ. XV կուսկոնֆերանսի, եջ 524) : Ի միջի այլոց, նրա իղեական դափակ Պրեոբրաժենսկին, չնայելով հակասական վերապահութիւններին, ըստ էութեան տրամադծորեն հակառակն ե պնդում «Закат капитализма»-յում, հայտարարելով, Վոր Մարքսը «յեղնում եր կապիտալիզմի զարգացման համարաչափութեանից կամ, ավելի ճիշտ կլինի ասել, նա ընդհանրապես դուրս եր մղում այդպիսի զարգացման անհամարաչափութեան պրոբլեմը» (եջ 54) : Սակայն տվյալ կապակցութեամբ մեզ ավելի կարևոր ե ընդդժեկ, Վոր Տրոցկին իր այս ճիշտ մի ավելորդ անգամ ապացուցեց իր մասին յեղած լենինյան դնահատականը, Վորպես «միջուկ ֆրազների հերոսի», միշտ սիկոֆանտի ցատկուններով հարցի էյութիւնը սվաղողի : Յեկ հիրավի, չե՞ Վոր հարցն այդպես դնելով կնշանակի կլասիկ կապիտալիզմի ե իմպերիալիզմի շրջանում այդ որենքի ունեցած արտահայտութեան առանձնահատկութիւնների կոնկրետ անալիզը փոխարինել ընդհանուր ֆրազով :

Մարքսը ե Ենդելսը Վոչ միայն դիտելին կապիտալիզմի անհավասարաչափ շարգացման որենքը, այլև իսկապես, ի հակակշիռ Պրեոբրաժենսկու կեղծ պնդումին, այն տեսական Մոնրլանը, Վոր նրանք բարձրացրին արտադրութեան կապիտալիստական յեղանակի անալիզով, միաժամանակ հանդիսանում ե կապիտալիզմի համար այդ որենքի անհրաժեշտութեան հիմնավորումը : Այնպես Վոր այդ մոմենտի մասին հարկավոր ե դատել Վոչ միայն ե Վոչ այնքան նրանց ուղղակի ցուցումներով, այլ թափանցելով կապիտալիզմի մարքսիստական տեսութեան ամբողջ էյութեան մեջ : Կապիտալիզմի ժամանակ կարո՞ղ ե արդյոք համարաչափ զարգացում լինել : Բայական ե հարցն այսպես դնել, Վորպեսզի նրան դրական պատասխան տալու ամբողջ անկարելիութիւնն ակներև դառնա :

Հայտնի յե, Վոր ապրաքնային արտադրութիւնը հիմնվում ե աշխատանքի հասարակական բաժանման վրա ե Վոր կապիտա-

լիզմը, Վորպես զարգացած ապրանքային արտադրութիւն՝ հասցրել ե աշխատանքի այդ բաժանումը չտեսնված բարձրութեան : Կապիտալիզմի զարգացման պրոցեսում Վոչ միայն վերջնականապես ձեակերպվեց արդյունաբերութեան ու հողագործութեան, ինչպես նաև արդյունահանող ե մշակող արդյունաբերութեան բաժանումը, այլև նրանցից յուրաքանչյուրի մեջ առաջ յեկան նորանոր ինքնուրույն ճյուղեր : «Ապրանքային տնտեսութեան զարգացումը, — գրում եր Լենինը, — տանում ե այսպիսով դեպի արդյունաբերութեան առանձին ե ինքնուրույն ճյուղերի թվի մեծացումը . այդ զարգացման տեղեկնցն այն ե, Վորպեսզի արդյունաբերութեան մի առանձին ճյուղ դարձնի Վոչ միայն յուրաքանչյուր առանձին արտադրանքի արտադրութիւնը, այլ նույնիսկ արտադրանքի յուրաքանչյուր առանձին մասը ե Վոչ միայն արտադրանքի արտադրութիւնը, այլ նույնիսկ առանձին ոպերացիաներ՝ արտադրանքները գործածութեան պատրաստելու համար» («Сочинения», հատ. III, եջ 15) :

Իսկ ի՞նչ ե բղխում աշխատանքի հասարակական բաժանման այսպիսի ծավալումից : Այն, Վոր անընդհատ առաջացող բոլոր նորանոր ձեռնարկութիւններն ու ճյուղերը փոխադարձաբար սերտորեն կապվում են իրար հետ ե այդպիսով Վոչ միայն ընդարձակվում ե ներքին շուկան, այլև ստեղծվում ե համաշխարհային շուկա, Վորպես այդ փոխադարձ կապի բեկման ե արտահայտութեան յուրահատուկ ֆոկուս :

Յեթե նկատի ունենանք, Վոր այդ պրոցեսին զուգընթաց ավելի ե ավելի յե առաջադիմում աշխատանքի հանրայնացումն այս բաժանվող որչեկոտներում, ապա պարզ կլինի, թե կապիտալիզմի ժամանակ արտադրութիւնը մինչև Վո՞ր աստիճան կրում ե ըստ էյութեան հասարակական բնույթ :

Մենք այստեղ ունենք այնպիսի դրութիւն, Վոր արդեն չի կարելի խոսել առանձին անհատի արտադրութեան մասին, այլ կարելի յե խոսել հասարակութեան արտադրութեան մասին, Վորովհետե գործարաններում մշակվող բոլոր ապրանքները հանդիսանում են բաղմամբիվ բանվորների աշխատանքի արդյունք ե, ինչպես ցուց ե տալիս Ենդելսն «Անտի-Դյուրինգ»-ում՝ «Վոչ Վոչ առանձին չի կարող ստել դրանց մասին, թե այս յե եմ պատ-

րասանլ, այս իմ արտադրանքն է» (Եջ 154): Մենք ունենք արն-
պխի փաստ, վոր դործարաններում աշխատանքը կազմակերպ-
ված է, ինչպես բնութագրում է Նեդելը, «մտածված ծրագրով»
(նույն տեղը):

Բայց բանն այն է, վոր արտադրության այս հասարակա-
կան բնութքը կապիտալիզմի ժամանակ հանդիսանում է լոկ
հակասության, կապիտալիզմի հիմնական հակասության բեկո-
ներից մեկը, վորի մյուս բեկոը հանդիսանում է մասնավոր-
կապիտալիստական յուրացումը: Հասարակական աշխատանքի
արտադրանքը կապիտալիզմի ժամանակ հափշտակվում է կապի-
տալիստների կողմից, կազմում է նրանց հարստացման աղբյուրը,
և դա այն հիման վրա, վոր անմիջական արտադրողները զրկված
են արտադրության միջոցներից, վոր այդ միջոցները, վորպես
մասնավոր սեփականություն, կենտրոնացած են կապիտալիստ-
ների ձեռքում: Այլ կերպ ասած, աշխատանքի հասարակական
բնութքի սրուղները վոչ թե քաղում է հասարակությունը, այլ
քաղում են մի խումբ կապիտալիստներ՝ հավելյալ արժեքի ձևով:
Մրա հետևանքով էլ այս հակասությունն արտահայտվում է պրո-
լետարիատի և բուրժուազիայի հակամարտության և դասակար-
գային պայքարի մեջ:

Կապիտալիզմի մնացած բոլոր հակասություններն արդյունք
են նրա այս հիմնական հակասության: Որինակ՝ այն հակասու-
թյունը, վոր արտադրության ընդարձակման անսահման հնա-
րավորությունները դեմ են առնում սպառման սահմանափակու-
թյանը, շնորհիվ մշտապես աճող պոտենցիալի և մասսաների
աղքատացման, այսինքն՝ արտադրության և սպառման միջև յե-
ղած հակասությունը՝ հիմնված է կապիտալիզմի հենց այդ հիմ-
նական հակասության վրա և կազմում է նրա արտահայտու-
թյունը: Այդ հիմնական հակասությունից է բխում նաև այն,
վոր ձեռնարկությունների ներսում արտադրության կազմակերպ-
մանը հետևում է արտադրության անարխիան **հասարակական**
մասշտաբով: Կատարի մրցակցությունը բանվորների հավելյալ
արժեքի սույուծի բաժինը յուրացնելու համար նույնպես այժ
հիմնական հակասության դրսևորումն է հասարակության մ
կերևութի վրա:

Կապիտալիզմի անհավասարաչափ զարգացումը ճիշտ կերպով

հասկանալու համար չի կարելի վերանալ այդ հակասություն-
ները, վորոնք իրենց կնիքն են դնում անհավասարաչափ զար-
գացման վրա, տալիս են նրան հատուկ որենքի, կապիտալիս-
տական սխտեմին հատուկ որենքի բնույթ: Մի՞թե կարելի չե
ղանազան ձեռնարկությունների, ճյուղերի և յերկրների անհա-
վասարաչափ զարգացումը բաժանել, որինակ, արտադրության
կապիտալիստական յեղանակի անարխիականությունից և նրա հետ
կապված մրցակցությունից: Իսկ այս վերջինները, ինչպես մենք
մասնանշեցինք, իրենք հանդիսանում են կապիտալիզմի հիմնա-
կան հակասության արտահայտություն: Այդ պատճառով, թե-
կուզ հենց միայն այս կողմից, կապիտալիզմի անհավասարաչափ
զարգացման որենքը չի կարող կապված չլինել կապիտալիզմի
հիմնական հակասության հետ և, վերջին հաշվով, հանդես չդալ
վորպես մեկը նրա արտահայտություններից:

Ահա թե ինչո՞ւ այնքան վողորմելի և ծիծաղելի յեն հան-
րամարդկային որենքի պաշտպաններն իրենց փորձերի մեջ՝ հրա-
ժարվելու կապիտալիզմի անհավասարաչափ զարգացման որենքի
կոնկրետ հիմունքներից: Յեւլ ահա թե ինչու մարքսիզմի հիմնա-
դիրները, հայտարերելով և վերլուծելով կապիտալիզմի հիմնա-
կան հակասությունը, վոչ միայն «մեղնից վատ չզիտեյին», այլև
հիմնավորեցին այդ որենքը:

Մարքսը «Կապիտալ»-ի I հատորում, մասնավորապես «Աշխա-
տանքի բաժանում և մանուֆակտուրա» գլխում, հանդամանո-
րեն կանդ առնելով աշխատանքի հասարակական բաժանման զար-
գացման պրոցեսի վրա կապիտալիզմի շրջանում, ընդդեմելով աշ-
խատանքի բաժանման սպեցիֆիկ կողմերը, դեռևս սույալ կա-
պակցությամբ, ցույց է տալիս արտադրության զանազան վո-
լորտների անհամաչափ զարգացման անխուսափելիությունը և
դրանով իսկ բաց է անում անհավասարաչափ զարգացման որեն-
քի տարրերից, արտահայտություններից մեկը: «Մանուֆակտու-
րայի մեջ, — դրում է Մարքսը, — խստորեն վորոշված համամաս-
նությունների և հարարբությունների յերկաթյա որենքը բաշ-
խում է բանվորական մասսաները տարբեր Փունկցիաների մի-
ջև. ընդհակառակը, պատահականության և կամայականության
քահաճ խաղն իր դործն է տեսնում ապրանքարտադրողներին ու

24433-59

16



արանց արտադրամիջոցները հասարակական աշխատանքի տարբեր ճյուղերի միջև բաշխելու դործում: Թեև արտադրութայն տարբեր վերջուրտները մշտապես ձգտում են հավասարակշռվելու, վերջուհետև մի կողմից ամեն մի ապրանքարտադրող պետք է մեկ սպառարժեք արտադրի, ուրեմն հասարակական մի հատուկ պահանջմունք բավարարի... սակայն մյուս կողմից էլ ապրանքների արժեքի որենքն է վերջուրտ, թե հասարակութունն իր տրամադրութայն տակ ունեցած ամբողջ աշխատատեղանակի վս'ր մասը կարող է ծախսել ամեն մի առանձին ապրանքատեսակի արտադրութայն վրա: Սակայն արտադրութայն տարբեր վերջուրտների հավասարակշռվելու այդ մշտական միտումն արտահայտվում է լոկ իրեն հակադրեցութուն այս հավասարակշռութայն մշտական խախտման դեմ» («Капитал», հատ. I, էջ 268): Հենց այստեղ էլ Մարքսն ընդդժում է, վոր մրցութունը և նրա ներդործութունը վերջուրտը շահերի ընդհարման դժով հանդիսանում են վերջուրտ միակ հեղինակութուն անկախ ապրանքարտադրողների համար:

Մարքսի այս խոսքերի իմաստն այն է, վոր այն պայմաններում, յերբ աշխատանքի ընդհանրացման պրոցեսը տեղի յե ունենում ընդհանուր առամար ապրանքային - կապիտալիստական տնտեսութայն մասնավոր յուրացման և անարխիականութայն հիմքերի վրա, յերբ թելադրող է մրցութունը և վճող է հանդիսանում արտադրութայն կապիտալիստական յեղանակի շարժման որենքի, այսինքն՝ արժեքի որենքի տարբերքը, ապա ուրեմն չի կարող լինել տարբեր ճյուղերի հավասարաչափ զարգացում և ընդհանրապես զարգացման հավասարաչափութուն:

Մենք կցանկանայինք հատուկ ուշադրութուն դարձնել մեր հենց նոր արած մեջբերման այն մասի վրա, վորտեղ Մարքսն աներկմիտ կերպով ընդդժում է, վոր հավասարակշռութունը կապիտալիզմի ժամանակ լոկ հակադրեցութուն է նրա մշտական խախտման դեմ: Դա անհրաժեշտ է՝ Պրեոբրաժենսկու կողմից Մարքսի հասցեյին ուղղված մեր վերև նշած «հանդիմանութայն» կապակցութայն: Պրեոբրաժենսկին զրպարտում է, յերբ ասում է, թե Մարքսն անդիտանում է անհավասարաչափ զարգացման որենքը. նա այդ ասելով՝ կոնկրետ նկատի ունի

Մարքսի վերարտադրութայն և ճգնաժամերի տեսութունը: Տրոցկիստական ճուռ հայելու մեջ Մարքսն այնպես է այլանդակվում, վոր յերևում է վերջուրտ կատարյալ մեխանիստ, վորը կապիտալիստական որինաչափութունների իր քննութունը հիմնում է հավասարակշռութայն վրա:

Բնորոշ է, վոր Պրեոբրաժենսկին յերկչոտութայն մեղադրելով Մարքսին անհավասարաչափութայն որենքի անդիտացման մեջ, իր «Закат»-ի մյուս մասերում կարծես պատիվ է անում՝ ընդունելով, վոր այնուամենայնիվ Մարքսը զիտեր այդ որենքը: Այդպիսով, դուրս է դալիս, վոր զիտեր, բայց բացասում էր ինչ-վոր պատճառով: Այնուհետև, Պրեոբրաժենսկուն, իհարկե, չեր կարող հայտնի չլինել Մարքսի բազմիցս արտահայտած այն միտքը, վոր «հավասարակշռութունը կապիտալիստական արտադրութայն տարբերայնորեն ձևավորվող կազմում հանդիսանում է վերջուրտ պատահականութուն» («Капитал», հատ. II, էջ 362): Դիալեկտիկական մատերիալիզմի հիմնադիրն ընդհանրապես հնուր յեր այն մտքից, վորպեսզի յեղակեա ընդունել վոչ թե արտադրութայն կապիտալիստական յեղանակի հակասական շարժումը, այլ միայն նրա մասնակի դեպքը և մոմենտը - հավասարակշռութունը: Յերևի Պրեոբրաժենսկուն ձեռնտու յեր այս ամենը «մոռանալ», վորպեսզի մեղադրանքն ուրիշ վրա բարդելով, թագցնել կարողանա և արդարացի իր սեփական մեխանիցիզմը:

Հայտնի յե, վոր ճգնաժամերի մասին Պրեոբրաժենսկու տված «բացատրութունների» վարիանտներից մեկը հետևյալն է. «Հիմնական կապիտալի վերականգնման և առանձնապես մեծացման անհավասարաչափութունը բուրժուական հասարակութայն մեջ՝ հանդիսանում է ընդհանուր տնտեսական ճգնաժամերի զրլթափոր, անմիջական և մոտակա պատճառը» («Закат капит.» էջ 81): Որինակ, զարգացման անհավասարաչափութայն այսպիսի հասկացողութունը Մարքսը հիրավի «կրացասեր», ինչ զնով էլ ուզում է լինի:

Պրեոբրաժենսկուն անհրաժեշտ է մինչ այդ աստիճան սեղմել կապիտալիզմի անհավասարաչափ զարգացման որենքի բովանդակութունը և վերածել այն հիմնական կապիտալի անհա-

վատարաչափ վերականգնման ու մեծացման, վորպեսզի առանց դժվարությունների կարողանա ի չիք հայտարարել կապիտալիզմի հիմնական հակասությունը՝ արտադրություն հասարակական բնույթի ու յուրացման մասնավոր բնույթի միջև և ճշնաթամերի գլխավոր պատճառ ցուցադրել հիմնական կապիտալի հենց այդ անհավասարաչափ վերականգնումն ու մեծացումը:

Բայց աչքաթող անել ճշնաթամերի խիական գլխավոր պատճառը՝ կապիտալիզմի հիմնական հակասությունը, անդիտանալ, վոր հենց նրանով է սլայմանավորված հիմնական կապիտալի այդ վերականգնման և մեծացման անհավասարաչափությունը և առաջադրել այս վերջինը վորպես «գլխավոր սլայտճառ», սա նշանակում է հորինել ճշնաթամերի համար այնպիսի «գլխավոր պատճառ», վորը հատուկ չէ, իմանենտ չէ կապիտալիզմին, իսկ աղբյուրից էլ սկսել բացասել ճշնաթամերի անխուսափելիությունը և անհրաժեշտությունը կապիտալիզմի համար:

Պրեորբաթենսկին հենց այստեղ էլ հասնում է, չընդունելով, վոր իմպերիալիզմի ժամանակ շարժման ցիկլային բնույթը, թեև կող մոդիֆիկացիայի յենթարկված տեսքով (այն իմաստով, վոր ճշնաթամի ժամանակամիջոցն ավելի յերկարատև և տանջալից է, իսկ վերելքի ժամանակամիջոցի տևողությունը խիստ կարճատև), շարունակում է պահել իր լիակատար ուժը: Նա, ընդհակառակը, գերադասում է հարստացնել հարմոնիկ կապիտալիզմի «տեսություն» ժանդոտած ղինանոցն իր «որինակով», ըստ վորի մոնոպոլիստները գիտակցաբար կազմելով հիմնական կապիտալի ռեզերվները, այդ ռեզերվներն ապահովելով բավականաչափ առաձգականություն, գրանոյ իսկ կարող են ստեղծել անխախտելի հավասարակշռություն, կանխելով ամեն տեսակի ցնցումներ, վորոնք կարված են հիմնական կապիտալի վերականգնման և մեծացման անհավասարաչափության հետ:

Ընտնալ անհավասարաչափության մունետիկ՝ «հարմոնիկ» կապիտալիզմի «հավասարաչափություն» և «հավասարակշռություն» դարաշրջանն «այնտեղների» շարքերը մտնելու համար, — ահա թե վորտեղ պետք է փնտոեր Պրեորբաթենսկին մեխանիցիզմը:

Նպատակ չընելով ցույց տալու վերարտադրության և ճշնաթամերի մարքայան տեսությունն սրողպատակուռ ղիմացկունությունը բազմաթիվ այնպիսի հարձակումների դեմ, ինչպիսին է Պրեորբաթենսկու հավակնությունը՝ «դարգացնել», այսինքն՝ ռեվոլյուցիայի յենթարկել այդ տեսություն հիմունքները, մենք ավելորդ չենք համարում ընդգծել, վոր այդ տեսությունը վո՛չ միայն չի տալիս վորևէ առիթ մեղադրելու Մարքսին կապիտալիզմի դարգացման անհավասարաչափությունն որենքն անդիտանալու մեջ, այլ, ընդհակառակը, նա միաժամանակ հանդիսանում է վորպես այդ որենքի հատուկ իլլյուստրացիա և հիմնավորում:

Մարքսը վերարտադրության և ճշնաթամերի իր տեսությունը էյապես պարզեց և լուծեց արտադրության կապիտալիստական յեղանակի հավասարաչափ, հարթ, ներդաշնակ դարգացման անկարելիության սրբբեմը: Նա իր գիտական արքստրակցիայով՝ վերարտադրության սխեմաների մեջ վերլուծելով համամասնականության (пропорциональность) և հավասարակշռության համար բոլոր պահանջվող սլայմանները, դրանով իսկ ընդգծեց հենց Երանց հարաբերականությունը և պատահականությունը, «վորովհետև կապիտալիստական հասարակության մեջ, վորտեղ հասարակական հասկացողությունը միշտ իրադեկ է դարձնում իր մասին միայն post festum՝ կարող են ծագել և պետք է մշտապես ծագեն խոշոր խախտումներ» («Классовая борьба», հատ. II, էջ 287): Բայց մի՞թե այսպիսի նրբությունը կարող է ըմբռնել մեխանիստը, վորը տեսնում է միայն սխեմաների արտաքին կողմը և անդիտանում է նրանց խորիմաստ բովանդակությունն ու ելույթությունը:

Հայտնի յե, վոր Մարքսը և՛ տվյալ, և՛ այլ կապակցություն, քննելով առաջին և յերկրորդ ստորաբաժանման դարգացման անհավասարաչափության առկայությունը, ակներև կերպով ցույց տվեց, վոր այս անհավասարաչափության հատուկ սոցիալ-դասակարգային դեմքը բնորոշվում է կապիտալիզմի հիմնական հակասությամբ, վոր գոյություն ունի արտադրության հասարակական բնույթի և կապիտալիստական յուրացման միջև: «Կուտակումը կուտակման համար, արտա-

դրութիւնն արտադրութեան համար, — գրում եր Մարքսը, — այսօր ֆորմուլով կլասիկ քաղաքատնտեսութիւնն արտահայտեց բուրժուական ժամանակաշրջանի պատմական կոչումը» («Капитал», հատ. I, էջ 469): Այս պատմական կոչումը կոնկրետ կերպով արտահայտվում է I ստորաբաժանման ավելի արագ աճի մեջ՝

1) ստորաբաժանման համեմատութեամբ:

Բայց կապիտալիզմի այս պրոզրեսիվ կողմն սկզբից ևեթ կրում է սահմանափակ բնույթ և վերջին հաշիվով դեմ է առնում այն սահմանափակին, վոր սրան համապատասխան կերպով չի ընդարձակվում սպառման բաղան, վոր արտադրողական ուժերի այսքան սրընթաց զարգացումը չի ոգտագործվում արտադրողների մասայի կողմից: Ինչպես գրում եր Լենինը, — ճիշտ չեք լինի յենթադրել, վոր «արտադրութեան միջոցներ պատրաստելը կարող է զարգանալ միանշամայն անկախ սպառման առարկաներ պատրաստելուց և վոչ մի կապ չունենալ նրա հետ» («Сочинения», հատ. II, էջ 400):

Արտադրութեան միջոցները կապիտալի ձեռով ծառայում են վոչ թե արտադրողների կյանքն ու աշխատանքի պայմանները բարելավելու, այլ հանդիսանում են արտադրողների, վորպես վարձու ստրուկների, շահագործման և ստորացման հիմք, հավելյալ արժեքի յուրացման և կապիտալի մեծացման հիմք: Այդ պատճառով արտադրողական ուժերի զարգացումը կապիտալիզմի ժամանակ՝ արտահայտվելով առաջին ստորաբաժանման ավելի արագ զարգացման ձևով՝ քան յերկրորդինը և հանդիսանալով կապիտալի մագնատների հարստացման միջոց՝ գտնվում է մշտական հակասութեան մեջ այդպիսի սահմանափակ նպատակի հետ:

Այս փորձեցեք հրատարակել այնպիսի a' la Տրոցկի «զծերից», ինչպիսին I և II ստորաբաժանումների կապիտալիստական զարգացման անհավասարաչափութիւնն է! Այն ժամանակ ստիպված պետք է լինեք ընդունելու մի այսպիսի անմտութիւն, վոր արտադրութեան միջոցների արտադրութեան և սպառման միջոցների արտադրութեան զարգացման բնագնալուծում մենք կունենանք հար և նման անհավասարաչափութիւն և՛ սոցիալիզմի, և՛ լիակատար կոմունիզմի ժամանակ: Չե՞ վոր ընդհա-

նուր առամար այստեղ ևս անհրաժեշտորեն արտադրութեան միջոցների արտադրութեան զարգացման տեմպը չի կարող չզերազանցել սպառման միջոցների արտադրութեան զարգացման տեմպին:

Սակայն բանն այն է, վոր արտադրութեան միջոցների զարգացման այդպիսի բարձր տեմպը վոչ միայն կապված չէ սոցիալական կոնֆլիկտների ու ջնջումների հետ, այլև դիտակցորեն նախագծված կարողով ամբողջովին ծառայում է արտադրողների աշխատատեղի կրճատմանը և առհասարակ աշխատանքի պայմանների բարելավմանը, արտադրողականութեան հարաձուռն բարձրացման հիման վրա ավելի ու ավելի մեծացնելով սպառման հասարակական ռեսուրսները: Տարբերութիւնը, ինչպես տեսնում ենք, արմատական ու սկզբունքային բնույթ է կրում:

Այդպիսով, մենք վոր կողմից ել մոտենալու լինենք հարցին, անկարելի կլինի բացասել, վոր զարգացման անհավասարաչափութիւնը կապիտալիզմի ժամանակ, գործելով նրա հակասութիւնների ֆոնի և հիմքի վրա, հանդիսանում է վորպես արտադրութեան կապիտալիստական յեղանակի հատուկ որեւք:

Սակայն կապիտալը միջադպային յերևույթ է և վոչ թե կղզիացած: Նա պատմութեան ասպարեզ յեղնելու հենց սկզբնավորութիւնից ճեղքվածք առաջ բերեց ֆեոդալական տնտեսութեան ինքնամիտի սրտում և ավելի ու ավելի խորացնելով այդ ճեղքվածքը, վերջիվերջո բոլորովին վիշեց առանձնացած ֆրոդները և ստեղծեց կապիտալիստական ազդային-տնտեսական մարմիններ: Այդ պրոցեսի մեջ նրան չկարողացալ դիմադրել և վոչ մի «չինական» պարիսպ, և կապիտալն իր գործը կատարեց ամենուրեք, վորտեղ նա կարողացալ թափանցել: Նա, ինչպես մենք ցույց տալինք վերև, ծավալեց աշխատանքի հասարակական բաժանումը ծայրահեղ չափերով և դա վոչ միայն նրա կողմից կազմավորած ազդութիւնների ներսում, այլև միջազդային մասշտաբով. հետևապես, կապիտալը վոչ միայն բաժանեց ազդութիւններն իրարից, այլև կապեց նրանց համաշխարհային շուկայի հանգույցներով և կապեց այնպես, վոր, որինակ՝ Անգլիան չի կարող ապրել մեկ շաբաթ առանց դրսից կենսամթերքներ ներմուծելու:

Յեւ այդպես, յեթե իրեն՝ արտադրութեան կապիտալիստական յեղանակին իմաննաւ ե զարդացման անհավասարաչափութիւնը, ապա տարրինակ և անհասկանալի կլինի կարծել, թե ազգային-տնտեսական մարմինները, վորոնց մեջ և ամբողջաժարտադրութեան տվյալ յեղանակը, կարող եյին զարդանալ հավասարաչափ: Ձեռնարկութիւնների, վորտրոնների, ճյուղերի, ստորաբաժանումների անհավասարաչափ զարդացման ժամանակ, նրանց ընդգրկող առանձին յերկրների հավասարաչափ զարդացում չի կարող լինել միջազգային չափերով տարերայնորեն աճող աշխատանքի հասարակական բաժանման պայմաններում: Ահա թե ինչու անհավասարաչափութեան որեւէ մասին մենք պետք և խոսենք վոր միայն կապիտալիստական արտադրական միավորների և խմբերի նկատմամբ, այլև առանձին կապիտալիստական յերկրների:

Բայց տվյալ կապակցութեամբ անհրաժեշտ և կանգ առնել մի շարք խնդիրների վրա, վորոնք ունեն ամենասերտ առնչութիւնը կապիտալիզմի անհավասարաչափ զարդացման որեւէ հետ:

III

Մենք վերևում աշխատեցինք ցույց տալ կապիտալիզմի անհավասարաչափ զարդացման որեւէ ամենախորհրդանշանները, այդ որեւէ պայմանավորված լինելը արտադրութեան կապիտալիստական յեղանակով, նրա հակասութիւններով: Բայց յերթ խոսում ենք առանձին կապիտալիստական յերկրների զարդացման անհավասարաչափութեան մասին, այստեղ մենք անպայման պետք է նկատի ունենանք տվյալ կոնկրետ պայմանները, վորոնց Փոնի վրա տեղի ունի կապիտալիզմի անհավասարաչափ զարդացման որեւէ այդ հիմունքների գործողութիւնը:

Վերցնենք հետևյալ հարցը:

Մենք ժխտում ենք և միանշամայն իրավացիորեն արհամարհանքի յենք արժանացնում կառուցկիական նատուրալիստական փորձերը՝ բացատրելու գյուղատնտեսութեան զարդացման տեմպի հետ մնայն արդյունաբերութեան տեմպից՝ կապիտալիզմի ժամանակ: Սա արդյո՞ք նշանակում է, վոր մարքայիզմն

ընդհանրապես ժխտում է բնական պայմանների դերը կապիտալիստական զարդացման ընթացքում: Յերբեք: Այդպիսի միակողմանիութեան մեջ ամենից քիչ կարելի յե հանդիմանել մարքայիզմը, արդյունաբերութեան առանձին ճյուղերի և առավել ևս զանազան յերկրների զարդացման անհավասարաչափութիւնը բացատրելիս:

«Կապիտալ»-ի III հատորում Մարքսը, ընդգծելով արդյունաբերութեան այլ և այլ ճյուղերում աշխատանքի արտադրողական ուժի անհավասարաչափ զարդացման փաստը, գրում է. «Յեթե արտադրողական ուժի զարդացումն արդյունաբերութեան այլ և այլ ճյուղերում կատարվում է վո՛չ միայն չափազանց տարբեր համամասնութիւններով, այլ և հաճախ հակադիր ուղղութեամբ, ապա դա միայն անարխիայից ու մրցակցութիւնից և արտադրութեան բուրժուական յեղանակի առանձնահատկութիւնից չէ, վոր բղխում է: Աշխատանքի արտադրողականութիւնը կապված է բնական պայմանների հետ, վորոնք հաճախ դառնում են պակաս ձեռնուռ արտադրողականութեան բարձրացմանը զուգընթաց, ինչ չափով վոր վերջինս կախման մեջ է հասարակական պայմաններից» («Капитал» III հատ. էջ 179):

Դժվար չէ հասկանալ, վոր Մարքսը բնական պայմաններին ինքնուրույն դեր չի վերագրում, այլ այդ դերը նա արժեքավորում է արտադրողականութեան բարձրացման և վերջինիս հասարակական պայմանների ասպեկտով: Միայն այս սահմաններում, նրա տեսակետով, բնական պայմանները կարող են ազդել արդյունաբերութեան տարբեր ճյուղերի աշխատանքի արտադրողական ուժի զարդացման անհավասարաչափութեան վրա:

Մարքսը, ընդհանրապես, այլ կապակցութիւններով բացմիցս ընդգծել է բնական միջավայրի նշանակութիւնը, որինակ՝ այդ միջավայրի դանդաղանակելով լինելը «պահանջների, ընդունակութիւնների, աշխատանքի յեղանակների» զարդացմանն ռժանդակելու իմաստով, կամ վորպես «աշխատանքի բաժանման բնական հիմք»:

Միաժամանակ Մարքսը յերբեք չէր մոռանում, վոր բնական պայմանների նշանակութիւնը բացարձակ չէ, այլ միանգամայն հարաբերական, վոր ինչքան հասարակութեան պրոգրեսն առաջ

և ընթանում, այնքան ավելի յե բնական միջավայրի դերը յենթարկվում արտադրողական ուժերի զարգացման տվյալ աստիճանին. այլ կերպ ասած՝ Մարքսն ամենապիտքը չափով լակ չեր նահանջում մոնիդից, վորակելով բնական միջավայրի դերը և նշանակությունը, նայած արտադրողական ուժերի վիճակին և ընդհանրապես արտադրություն տվյալ յեղանակին:

Նույնը պետք է ասել աշխարհագրական պայմանների վերաբերյալ: Հին, իմաստուն աֆորիզմն ասում է, վոր ծովը բաժանում է միացնում է, նայելով թե ծովային տարերքը վո՞ր աստիճան սանձահարկած է արտադրողական ուժերի զարգացման միջոցով: Այսպիսով արտադրության տվյալ յեղանակի, նրա արտադրողական ուժերի զարգացման լույսի տակ միեւնույն բնական և աշխարհագրական պայմաններն ստանում են այս կամ այն արժեքավորումը:

Վաղ կապիտալիզմի շրջանում Հոլլանդիան հանդես եր դալիս վորպես առաջնակարգ յերկիր: Նա հուշակված եր արդյունարեբություն, դերադանցում եր բոլորին իր ծովային ուժերով, համարվում եր համաշխարհային գաղութային պետություն, մի խոսքով նա հանդիսանում եր, ինչպես Մարքսն է ասում՝ «XVII դարի որինակելի կապիտալիստական յերկիրը»: («Капитал» հատ. I, էջ 607): Սակայն Հոլլանդիայի բնական և աշխարհագրական պայմանները բացարձակ կերպով չատ քիչ էին փոխվել, յերբ նա—զարգացման անհամաչափության «կամքով»—ստիպված յեղավ իր առաջնությունը դիջել Անգլիային:

Յերբ Անգլիան առանձնապես XVIII դարի սկզբից սրընթաց կերպով սկսեց վեր բարձրանալ մինչև «աշխարհի արհեստանոցի» բարձունքները, այստեղ, իհարկե, դեր խաղացին նրա բնական և աշխարհագրական առավելությունները: Իր չհրապարակած ձեռագրերից մեկում Մարքսը, քննելով կապիտալիզմի զարգացման անհամաչափությունն Անգլիայում և Ֆրանսիայում, մեջ է բերում մի հեղինակի խոսքերը, թե՛ «արդյունարեբության վոսկորները և մկանները՝ ամխի ու յերկաթի բացակայությունը Ֆրանսիայում կաշկանդում է նրա, վորպես արդյունարեբական յերկրի, զարգացումը» (Архив М. П. Э., II (VII) էջ 255): Անկասկած է, վոր Անգլիայի զարգացման համար նվազ

նշանակություն ունեցող հանգամանք չեր այս «վոսկորների և մկանների» բավականաչափ քանակությունը սուկա լինելը, այն, վոր նա ուներ քարածխի հսկայական հանքավայրեր և նրանց մոտիկ հարուստ յերկաթահանքեր:

Բայց չե՞ վոր սկզբում, նախքան արտադրողական ուժերի զարգացման վորոչ աստիճանը, ավելի կոնկրետ ասած՝ մինչև շոգու դարի և նրա հետ միասին արտադրության բուրժուական յեղանակի հաղթանակը, Անգլիան նույնիսկ չեր կարող յերազել իր սլոտենցիալ հնարավորություններն ոգտադործելու մասին, թե՛ այդ և թե ծովազնացության դժով, վորպեսզի հասնի Հոլլանդիային և բարձրանա մինչև «աշխարհի արհեստանոցի» և «ծովերի թաղուհու» դրությունը:

Ահա թե ինչու Մարքսը, համաձայնվելով մասնանշված հեղինակի հետ բնական միջավայրի այս կամ այն առանձնահատկություն ունեցած դերի վերաբերյալ, հեռու յե նույնիսկ այն մտքից, թե կարելի յե այդ մոմենտին վճռական նշանակություն տալ, բացատրելու համար կապիտալիզմի զարգացման անհավասարաչափությունն Անգլիայում և Ֆրանսիայում: Նա թվական տվյալներով վեր հանելով արտադրողական միավորների մեծություն, շոգեղադրահանքի դործածության և այլ գծերով այդ յերկրների ունեցած տարբեր մակարդակը՝ վորպես հետևանք կապիտալիզմի անհամաչափ զարգացման, վերջինիս հիմնական պատճառը միտոում է հենց արտադրության կապիտալիստական յեղանակի և նրա հակասությունների մեջ:

Ի՞նչ չափով են եքսպրոպրիացիայի յենթարկված անմիջական արտադրողները և ի՞նչ չափով են կապիտալիստների կողմից մոնոպոլիզացիայի յենթարկված արտադրության միջոցները և հատկապես, ի՞նչ չափով է բաղա ստեղծված կուտակման և կենտրոնացման համար, արտադրության հասարակական բնութի և մասնավոր յուրացման միջև գոյություն ունեցող կապիտալիստական հակասության շարժման համար — ահա թե ինչի վրա յե սրում իր ուշադրությունը Մարքսը, յերբ բացատրում է կապիտալիզմի անհամաչափ զարգացման պատճառներն Անգլիայում և Ֆրանսիայում:

Այլ կերպ՝ Անգլիան ի՞նչպես կարող եր միակ իր բնական—

աշխարհադրական առավելութուններով Յրանսխայից շատ առաջ անցնել, յեթե հող չլիներ նախապատրաստված արտադրական ուժերի ավելի արագ զարգացման համար անմիջական արտադրողների եքսպորտը իացելով, վոր «գրված է մարդկային տարեգրության մեջ սրի և հրի բոցավառ լեղվով» (Մարքս), մի պրոցես, վոր այդ ժամանակաշրջանում Յրանսխայում տեղի յեր ունենում համեմատաբար վորչ այնքան ինտենսիվ կերպով, վորքան Անգլիայում:

Հետևապես, մարքսիցմը համապատասխան տուրք տալով բնական-աշխարհադրական պայմանների նշանակությանը, այնուամենայնիվ այն չի դուրձնում կապիտալիզմի անհավասարաչափ զարգացման ինքնուրույն գործոն, այլ նրա գործողութունը պայմանավորում է հենց կապիտալիզմի արտադրողական ուժերի զարգացման անհավասարաչափությամբ:

Մենք մինչև այժմ քննում եյինք կապիտալիզմի անհավասարաչափ զարգացման բացառապես տնտեսական կողմը: Այդ հասկանայի յե, վորովհետև դա ամենադիսպոզիոն է և ամենակարեւորը ամյալ պրոբլեմը ճիշտ լուծելու համար: Սակայն մեծագույն գոեհկացումը կլիներ պտտեցնել ամեն ինչ տնտեսական բաղիտի շուրջը և նվազեցնել ու առավել ևս արհամարհել այնպիսի վերնաշենքի դերը, ինչպիսին քաղաքականությունն է:

Իդուր չե, վոր մենք խոսում ենք կապիտալիզմի անհավասարաչափ տնտեսական և քաղաքական զարգացման որեւի մասին: Թեպետ և եկոնոմիկան հիմունքների հիմունքն է, թեպետ և քաղաքականությունը ինքը հանդես է գալիս վորպես խտացված եկոնոմիկա, այնուամենայնիվ քաղաքականությունը յերբեք եկոնոմիկայի պասսիվ կցորդը չե, այլ, համաձայն մարքսիտական հանրահայտ ճշմարտության, այնպիսի մի ակտիվ գործոն է, վորը հակադարձ գորեղ ներգործություն է ունենում եկոնոմիկայի զարգացման վրա, վերջինիս դանդաղեցման կամ արագացման իմաստով:

Յեթե 1566—1588 թ.թ. նիդեռլանդական հաղթական հեղափոխությունը չլիներ խաղանական բռնակալի դեմ և այդ հիմքի վրա չբարձրանար համապատասխան քաղաքական կարգ, Հոլլանդիայի աստղը 17-րդ դարում չեր փայլի այնպես: Այլ հարց

է, վոր ինքը հեղափոխությունը Ֆեոդալական հարաբերությունների վորոշակի քայքայումն ու խարխուլումն եր նշանակում նորածին կապիտալի կողմից:

Նույնը կարելի յե ասել Անգլիայի մասին, վորտեղ, մյուս յերկրների համեմատությամբ, ավելի արագահաս բուրժուական հեղափոխությունը, հողատերերի և կապիտալիստների, տորիների և վիդերի փոխադարձ համաձայնությունը բուրժուական հողի վրա ամենավճռական կետերում և ըստ այնմ ստեղծված քաղաքական կարգերը քիչ չոժանդակեցին Անգլիայի ավելի արագ կապիտալիստական զարգացմանը: Սակայն այդպիսի հարավորություններն ինքնին խոսում եյին այն մասին, վոր յերկրի եկոնոմիկայում արդեն բավականաչափ արմատներ է բռնել և ուժեղացել կապիտալը և պահանջվում եր լուրջ համապատասխան քաղաքական զարգացում, վորպեսզի ասպհոյվի նրա հետագա ավելի արագ ծավալումը:

Յրանսխայի որինակը, վորտեղ բուրժուական քաղաքական զարգացումը Յրանսխական Մեծ հեղափոխության շրջանում հասավ, կարելի յե ասել, իր ամենարարձր աստիճանին, ակներև կերպով ցույց է տալիս քաղաքական զարգացման դերի ամբողջ հարաբերականությունը, վորովհետև Յրանսխան դրանով վորչ միայն չկարողացավ տեղաշարժել կապիտալիստական զարգացման կշեռքն իր ոգտին, այլև չկարողացավ զերծ մնալ սեռատվրացիոն արշավներից:

Այնուհետև, յեթե վերցնենք Գերմանիան, կտեսնենք, վոր նա յերկար ժամանակ անչարժ մնաց միայլ կետում, չնորհիվ վորչ միայն տնտեսական, այլև քաղաքական զարգացման անհավասարաչափության: Մարքան այդ ետապի մասին ասում եր, վոր նա տառապում է վորչ այնքան կապիտալիզմի զարգացումից, վորքան թերզարգացումից: Մեղալի հակառակ կողմը քաղաքական զարգացման խիստ հետամնացությունն եր: Սակայն փաստը մնում է փաստ, վոր այդ հետամնաց քաղաքական պայմաններն իրենց հերթին արհեստական կերպով կաշկանդում եյին կապիտալիզմի զարգացումը: Այդ տեսակետից պատահական չե, վոր քաղաքականության մեջ «Յերկաթյա կանցլերի» ժամանակից տեղի ունեցած շրջադարձն անհետեանք չանցավ և Գերմանիան սկսեց խոշոր բեկում կատարել կապիտալիստական զարգացման ասպարիզում:

Վերջապես ամենքին հայտնի յե, վոր մեզ մոտ Ռուսաստանում աշխարհի քաղաքական խլամ, ինչպիսին հանդիսանում եր ցարիզմը, վոչ միայն հասարակ անդրադարձումն եր յերկրի տրեստեսական կյանքի հետամնացության, այլև այդ հետամնացությունը հավերժացնող կապանք եր:

Մեր այս թուուցիկ նկատողությունները ցույց են տալիս, վոր տնտեսական անհավասարաչափության բաղայի վրա յերևան ե դարևս դարգացման քաղաքական անհավասարաչափությունը, վոր նրանք հյուսվում են մեկը մյուսի հետ, դանձում են փոխադարձ կապի և փոխներդործության մեջ և այդ ամենի հետևանքով՝ մենք ունենք կապիտալիզմի տնտեսական և քաղաքական անհավասարաչափ դարգացման որևնք:

Մենք այստեղ մի անգամ ել ընդդժում ենք, վոր հին կապիտալիզմի որոք դարգացման անհավասարաչափության որևնքի մասին մենք ունենք Մարքսի վոչ միայն ընդհանուր, այլ և բաղմաթիվ ուղղակի ցուցումները. որինակ՝ նա «Հավելյալ արժեքի թեորիաները» աշխատության մեջ գրում ե. «բայց վորովհետև կապիտալիստական արտադրությունը կարող ե դարգանալ միմիայն վորոչ վորորաներում, վորոչ պայմաններում, ուստի ընդհանրապես անհնարին կլինի կապիտալիստական արտադրությունը, յեթև նա միաժամանակ և հավասարաչափ լիներ բոլոր վորորաներում» («Теории приб. стоим.», հատ. II, մաս 2, էջ 197):

Լենինը նույնպես այդ անհավասարաչափության մասին խոսել և շատ անգամ: Հետևե՛ք որմյան շրջանում, — գրում եր նա, — «Արորի և դմբիչի (цеп), չրաղացի և մանվածքային ձեռք-դադգյահի Ռուսաստանն սկսեց արագ կերպով դառնալ գութանի, կալսիչ մեքենայի, շոգեաղացի և մանվածքային շոգեղադդյահների Ռուսաստան... Այս փոփոխության պրոցեսը, կապիտալիզմի բնույթի համաձայն, չի կարող ընթանալ այլ կերպ, քան մի շարք անհավասարաչափությունների և անհամամասնությունների մեջ» («Сочинения» հատ. III, էջ 466):

17

Սակայն չե՞ վոր իմպերիալիզմը վոչ-կապիտալիզմ չե, այլ, ինչպես բաղմիցս ընդդժեւ և Լենինը, նա «հին կապիտալիզմի վրա բարձրացած վերնաշենք» ե («Сочинения», հատ. XXIV, էջ

132): Այդ պատճառով, թեկուզ հենց միայն այս տեսակետից, կապիտալիզմի անհավասարաչափ դարգացման որևնքն ընդհանրապես չի կարող հատուկ շլինել և նրան: Սակայն աշխարհի ընդհանուր դրույթը կարող ե բավարարել միայն հասարակական-տնտեսական Փորձացիաների և նրանց որինաչափությունների մետաֆիզիկ մեկնաբանողներին:

Կապիտալիզմը, վորպես հասարակական-տնտեսական Փորձացիա՝ կանգնած չե մեկ կետի վրա, այլ ունի իր ծագման, դարգացման և անկման պատմությունը: Յեւ ահա, յեթև իմպերիալիզմը վոչ-կապիտալիզմ չե, յեթև նա դուրս չե կապիտալիզմից, ապա նա դրա հետ միասին չի նույնանում ազատ մրցակցության ժամանակաշրջանի այսպես կոչված կլասիկ կապիտալիզմի հետ: «Իմպերիալիզմը, — գրում եր Լենինը, — կապիտալիզմի հատուկ պատմական ստադիան ե: Այդ առանձնահատկությունը յերեքն ե. իմպերիալիզմն ե (1) մոնոպոլիստական կապիտալիզմ. (2). — մակարուծական կամ փող կապիտալիզմ. (3) — մեռնող կապիտալիզմ («Сочинения», հատ. XIX, էջ 301): Այս կողմերը հիմք են տալիս համարելու իմպերիալիզմը նոր վորակ, սակայն յոչ կապիտալիզմի նկատմամբ, այլ կապիտալիզմի ներսում, վորն ընդգրկում ե հին կապիտալիզմը և իմպերիալիզմը, վորպես տարբերություններ միասնության մեջ, վորպես կապիտալիզմի ընդհանուր վորակի հատուկ վորոշիչներ:

Իսկ յեթև կապիտալիզմը կանգնած չե միևնույն կետի վրա, ապա անորամբանական և ուղղակի անհեթեթ կլինեք յենթադրել, վոր նրա որևնքները չեն դարգանում, չեն ձևափոխվում, չեն ստանում արտահայտության նոր վորակ: Չե՞ վոր կապիտալիզմի շարժումը կոնկրետ կերպով արտահայտվում և մարմնավորվում ե իր որևնքների շարժման և դարգացման մեջ: Այս իմաստով, ինչպես չի Եարելի մեխանիստորեն հակադրել կամ նույնացնել հին կապիտալիզմը և իմպերիալիզմը, ճիշտ նույն կերպ ել չի կարելի հակադրել կամ նույնացնել կապիտալիզմի անհավասարաչափ դարգացման որևնքը հին կլասիկ կապիտալիզմի և իմպերիալիզմի շրջանում:

Այդ որևնքն իմպերիալիզմի շրջանում նույնն ե, բայց և նույնը չե, վորովհետև այստեղ մենք փոփոխություն ենք տես-

նում նրա մեջ: Այստեղ կապիտալիզմի անհավասարաչափ զարգացումն արտահայտվում է ընդհատվողականութան հետ զուգորդվող և գրանով իր ներդրումություն թափը բարձրագույն թուխքավորություն ջղաձիգ կերպարանքով, վորին ավելի հանդամանորեն կանգնողաունանք իր տեղում:

Ահա այդ նորը նկատի ունենալով. Ստալինը, յերբ ասում էր, վոր Լենինը բացահայտեց և ձևակերպեց կապիտալիզմի անհավասարաչափ զարգացման որևէքը, իմպերիալիզմին հատուկ պայմաններում: Իսկապես, սովյալ թեղը լիովին համարատասխանում է նրա կլասիկ ընտրումանը, թե՛ լենինիզմը պրոլետարական հեղափոխություն և իմպերիալիզմի դարաշրջանի մարքսիզմն է:

Լենինիզմը բաց է անում կապիտալիզմի որինաչափությունների արտահայտություն, սուանձնահատկությունները՝ նրա զարգացման ամենաբարձր ստադիայում—իմպերիալիզմի շրջանում: Մարքսը և Ենգելսն իմպերիալիզմի շրջանում չարքելով, այդ ուղղությունը բացի ընդհանուր կոնսուրներ և շարժման տենդենցները գծելուց, բացի հանձարեղ նախատեսություններից, ուղղակի հնարավորություն չունեցին ավելին կատարելու: Նրանց աչակերաները՝ Լենինը և Ստալինը, շարունակելով դարգացնել մարքսիզմը նոր պատմական ժամանակաշրջանում, վեր հանեցին նույնպես վորակային այն նոր բնորոշումը, վոր ստացավ կապիտալիզմի անհավասարաչափ զարգացման որևէքը իմպերիալիզմի շրջանում:

Յերբ հակահեղափոխական Տրոցկին սկսեց բարձրացնել իրենհատուկ աղմուկը, թե՛ Մարքսն ու Ենգելսը նույնպես դիտեցին այդ որևէքը, դա մի սովորական բժախնդրություն չէր Տրոցկուկոզմից: Դա մի նոր ապացույց էր նրա մտածողություն բուրժուական—մետաֆիզիկական կառուցվածքի, քանի վոր նա հենց դրանով այդ որևէքի վերաբերյալ իր դոգմատիկ հասկացողությունը հակադրում էր դիալեկտիկական—մատերիալիստական հասկացողությունը: Դա, վերջապես, մի հերթական փորձ էր նրա կողմից իր փոսած մեթոդոլոգիական հիմունքների վրա, նման մի կարևոր կետում, վարկարեկել լենինիզմը, ժխտել նրատեղը և նշանակությունը պրոլետարատի իդեոլոգիայի և աչ-

խարհայացքի զարգացման դործում, հանուն հակահեղափոխական տրոցկիզմի:

Յեվ ահա, Տրոցկին,—բուրժուական այդ Դոն-Կիխոտը, ունենալով այսպիսի կետ-նպատակ, այն բանից հետո, յերբ նա ամեն կերպ աչխատեց անհավասարաչափ զարգացման որևէքը դարձնել վոչ պատմական մի որևէք, իր Սանչո-Պանսայի՝ Ջինովյեվի հետ միասին 15-րդ կուսկոնֆերանսում սկսեց քչտած թեկերով կատաղորեն առարկել լենինյան—ստալինյան այդ թեղի դեմ, վոր վերաբերում է անհավասարաչափ զարգացման դորեղ, ջղաձիգ ընույթին մոնոպոլիստական կապիտալիզմի ժամանակ, այդ որևէքի ընդհատվողական—թուխքածև արտահայտությունը:

«Ընկ. Ստալինը,—ասում էր Տրոցկին,—ընկել է մի մեծագույն տեսական և պատմական սխալի մեջ (sic! հավանորեն այն պատճառով, վոր տեսութունը նա չէր աջջրպետում պատմությունից և չէր արտահայտում այնպիսի արտառոց, վոչ-պատմական մոտեցում դեպի հասարակական որինաչափությունները, ինչպես մեր կարծեցյալ տեսաբանը.—Հ. Հ.)... Կապիտալիզմը, անկասկած, ծայրահեղորեն անհավասարաչափ է զարգանում նաև այժմ բոլոր յերկրներում, սակայն XIX դարում այս անհավասարաչափությունն ավելի մեծ էր, քան XX դարում» (Սղադր. հաչվետ., էջ 524): Նույնն էր կրկնում նաև Ջինովյեվը. «Ճիշտ չէ,—ասում էր նա,—վոր կապիտալիստական զարգացման անհավասարաչափությունը մինչև իմպերիալիստական դարաշրջանը ավելի փոքր էր» (Սղադր. հաչվ., էջ 573):

Եյապես վոչ մի բան չի փոխում այն հանգամանքը, վոր յերբ կուսակցությունը փաստերով նեղը լծեց նրանց, նրանք կոմիտեերնի Գործկոմի 7-րդ պլենումում մի քիչ փոխեցին իրենց ստնը, վերջնականապես իմձվելով հակասությունների մեջ, կամ լուրթյամբ դանց առնելով ինդիլը:

Տրոցկու հիշյալ պնդումը յերբեք պատահական համարել չի կարելի, վորովհետև դա լիովին զուգադիպում է վոչ միայն հասարակական որինաչափությունների վերաբերյալ նրա ունեցած մետաֆիզիկական հասկացողությունը, նրա բաղձանքին՝ փոխարինելու լենինիզմը հակահեղափոխական տրոցկիզմով, այլ և զուգադիպում է իմպերիալիզմի մասին նրա ունեցած եկեկ-



տիկ կոնցեսացիային, վորը հիմնված էր Հենց այդպիսի մեթո-
դոլոգիայի և այդպիսի հաշիվների վրա:

Իմպերիալիզմի տրոցկիստական կոնցեսացիան եյասլես հան-
դում է այն բանին, վորը չի ընդունում իմպերիալիզմը վոր-
պես կապիտալիզմի հատուկ ստադիա: Բազմական է ասել, ինչ-
պես ընդգծել է այդ ընկ. Ստալինը Կոմինտերնի Գործկոմի 7-րդ
պլենումում, վոր տրոցկիզմը յերբեք չի վամեցել հասկանալ իմ-
պերիալիզմի տնտեսական եյությունը, այն եյությունը, վոր
Լենինը նկատում էր «ազատ մրցակցությունը մոնոպոլիայով
փոխարինելու» մեջ:

Բայց և այս տեսակետից Տրոցկին չի կարող պարծենալ իր
որդինալությամբ, վորովհետև նա կրկնում էր լուկ կաուցիկա-
կան ցանցառությունները: Ամենքին հայտնի է, վոր Հենց Կա-
ուցիկին ապարդյուն կերպով ձգտում էր տերմինաբանական հոդ-
նեցուցիչ խորհրդակցությունների ժխտում խլացնել այդ եյու-
թյունը և վերջիվերջո հրամցնել իմպերիալիզմը վորպես լուկ
քաղաքականություն, այլ վրչ թե ամենից առաջ եկոնոմիկա,
կապիտալիզմի վերջին և հատուկ ստադիա: «Իմպերիալիզմը,—
գրում է Կաուցիկին,—նշանակում է քաղաքական հարցերի մի
առանձին տեսակ, վորոնք նշվեցին կապիտալիզմի նորագույն
Փաղի հետ, սակայն յերբեք նրան չեն դուզադիպում» («Իմպե-
րիալիզմ», էջ 1):

Մինչև իմպերիալիզմը «քաղաքական հարցերի առանձին տե-
սակ» հայտարարելը, վորոնք «չեն դուզադիպում նորագույն
Փաղին», հետևապես պատահական են և հատուկ չեն այդ
Փաղին, Կաուցիկին կարողացել էր արդեն նորագույն Փաղի վեր-
լուծությունից խուսափել և փաստորեն ժխտել այն վորպես այդ-
պիսին: Այնուհետև պարզաբանելով իմպերիալիզմի իր բնորո-
շումը, նա ասում է, թե «նրա եյությունն այն է, վոր բարձր
կապիտալիստական դարգացում ունեցող յերկիրը ձգտում է
մխացնել իրեն մեծ չափով դյուղատնտեսական շրջաններ, ուշա-
դրություն չդարձնելով, թե ինչ տարրերով են բնակված այդ
շրջանները» (նույն տեղում, էջ 2):

Իմպերիալիզմի տնտեսական եյությունը ժխտելու նույն վոր-
ձերը մենք տեսնում ենք Կաուցիկու նոր ապոլոգետիկ զառան-

ցանքների մեջ՝ «Պատմության մատերիալիստական ըմբռնումը»
գրքում:

Սակայն վոչնչով պակաս ջանք չի թափում այդ ուղղու-
թյամբ Տրոցկին: «Ի՞նչ բան է իմպերիալիզմը: Դա,—բացատրում
է նա,—կապիտալիզմի ձգտումն է վերջ տալ մանր պետություն-
ների դոյությանը» (տե՛ս Կոմինտերնի III կոնգրեսի սղագր.
հաշիվ. էջ 42): Ահա քեզ իմպերիալիզմի կաուցիկական բացատ-
րության տրոցկիստական վարիանտը: Յերբ մի անգամ Տրոցկին
վճռել է անտեսել իմպերիալիզմի տնտեսական եյությունը, վոր-
պես կապիտալիզմի առանձին ստադիա, նա այլևս գործ չունի
այն բանի հետ, վոր այդպիսի ձգտում ավելի կամ պակաս չա-
փով հատուկ էր նաև վաղ, նույնիսկ դասական կապիտալիզմին
(չե՞ վոր փաստ է, վոր բազմաթիվ մանր պետություններ զբլի-
վեցին անկախությունից և ընդհանրապես դոյության իրավուն-
քից վոչ իմպերիալիզմի շրջանում):

Իմպերիալիզմը պարզապես իբրև «մանր պետությունների
դոյությանը վերջ տալու ձգտում» (վորպիսի՛ քննուչ վոճ.—Չ.
Չ.) պատկերացնելու այսպիսի փութաջան ձգտման դեպքում ի-
դուր է սպասել Տրոցկուց, թե նա կարող է հաշիվ առնել այն
«մանրամասնիկը», վոր իմպերիալիզմը, ինչպես այդ ցույց
տվեց, որինակ՝ համաշխարհային պատերազմը, յերբեմն ինքն է
ստեղծում մանր պետություններ, վոր անգամ մեր որերում ճա-
պոնական իմպերիալիզմը իր ունտերների ավինների ուժով կա-
րողացավ ստեղծել Մանջու-Գոն:

Չե՞ վոր այդ մոմենտը նույնպես կապված է իմպերիալիզմի
տնտեսական եյության, նրա մոնոպոլիստական բնության հետ,
վորովհետև այդպիսի անվանական պետությունների ստեղծումը
յերբեմն ամենահարմար և եթանագին վարագույրն է զողարկե-
լու համար մոնոպոլիստական կապիտալիզմի ամենադարչելի չա-
հագործումը, մասնավորապես, յերբ անհրաժեշտ է մանրել
մյուս իմպերիալիստական մրցակցի դեմ:

Սակայն անհրաժեշտ է ընդգծել, վոր Տրոցկին, Կաուց-
կու նման բնորոշելով իմպերիալիզմը, իհարկե, պետք է ընդ-
հանրապես վոչ միայն ուշադրություն չդարձնել մոնոպոլիանե-
րի դերի վրա՝ կապիտալիզմի բոլոր հակասությունները սրելու

գործում, այլ նույնիսկ բանը հակառակ լույսի տակ ցույց տար = նա, որինակ, անհրաժեշտ համարեց դժել այսպիսի հովիվերգական պատկեր՝ մոնոպոլիստների և առևտսայդերների փոխհարաբերությունների մասին: «Նույնիսկ մոնոպոլիստական դրուժյան մոտ գտնվող տրեստը, —ասում էր Տրոցկին,— իր առաջ խնդիր էր դնում յուրաքանչյուր ավյալ մոմենտում ծածկել իր արտադրանքով շուկան ամբողջութամբ: Եեշտակի վերելքը շրջանում տրեստները թույլ են տալիս հաճախ իրենց կողքին գոյություն ունենալու վրչ տրեստացած ձեռնարկությունների, հնարավորություն տալով նրանց ծածկելու ավելացած պահանջը և այդպիսով ադատելու իրենց կապիտալի նոր վտանգավոր ներդրումներից» (Տրոցկի, «К социализму или к капитализму», էջ 61):

Յեւ ահա, յեթե բուրժուազիայի կլոուն Տրոցկին հիշում է մոնոպոլիստի մասին, ապա նա դրան տալիս է այնպիսի դույն, վոր այդ հիման վրա կարելի յե ծանոթանալ, ասենք՝ ինչպես այստեղ՝ մոնոպոլիստների «բարեսիրտ հաշվողությունը» «վայրենիները» նկատմամբ, սակայն վորքե պատկերացում ստանալ կապիտալիզմի հակասությունների ուժեղացման մասին մոնոպոլիստների ազդեցության տակ — այդ արդեն յերբեք չի կարելի:

Իսկ հիրավի՞ մոնոպոլիստների և առևտսայդերների միջև գոյություն ունի այն հարաբերությունը, ինչ նկարագրում է Տրոցկին: Մի կողմ թողնել մոնոպոլիստների իսկական «քաջագործությունները»՝ ամեն ինչ իրենց հպատակեցնելու, խեղդելու նրանց, վորոնք չեն յենթարկվում, չեն հաշտվում նրանց ձնշումներին ու կամայականություններին և հորինել նմանորինակ քաղցր հեքիաթներ—սա յե հենց ապոլոգետիկ լարախաղացություն կատարյալ տեսակը: Տրոցկու այդպիսի «քաջագործությունները» յեղակի չեն, վորոնց մեջ չի հիշվում անդամ այն մասին, վոր հակասությունը մոնոպոլիստների և առևտսայդերների միջև մեկն է իմպերիալիզմի ամենախոր հակասություններից: Հետևապես, մենք այստեղ գործ ունենք ուղղակի Տրոցկու մեկ վորձի հետ՝ սվաղել մոնոպոլիստի դերը՝ կապիտալիզմի հակասություններն ուժեղացնելու և սրելու գործում:

Այս բոլոր ասածներից հետո, արդարությունը պահանջում

է ասել, վոր Տրոցկին իր ձևով հետևողական է, յերբ առաջագրում է այն դրույթը, թե՛ իմպերիալիզմի ժամանակ զարգացման անհավասարաչափությունը թուլանում է: Այդ դրույթը արամաբանական յեղրակացություն է, վոր բղխում է հասարակական որինաչափություն վերսրերմամբ ունեցած նրա մետակական Ֆիլիկ յելակետներից, դա ուղղակի շարունակություն է այն գծի, վոր Տրոցկին տանում է՝ բացասելով այն, վոր իմպերիալիզմը հանդիսանում է կապիտալիզմի հատուկ ստադիան, դա արտահայտություն է իմպերիալիզմի տնտեսական եյություն անտեսման և ապա այն անփխտելի իրողություն քողարկման, վոր այդ եյությունը անհրաժեշտորեն պայմանավորված է կապիտալիզմի բոլոր հակասությունների անասելի չափերով սրումն իմպերիալիզմի շրջանում:

Մի խոսքով հակահեղափոխական Տրոցկին բոլոր գծերով աներկիմաստ իր բուրժուա-ապոլոգետիկ դրույթները հակադրում է լենինյան անալիզին:

У

Լենինը վերահիշյալ մեջբերման մեջ ցույց տալով իմպերիալիզմի յերբեք առանձնահատկությունները, հենց նույն տեղում ավելացնում է, վոր՝ «ադատ մրցություն փոխարինելը մոնոպոլիստի իմպերիալիզմի արմատական տնտեսական դիժն է, նրա եյությունը» («СОЧИНЕНИЯ» հատոր 19-րդ, էջ՝ 301): Այս նրա եյությունը՝ «Сочинения» հատոր 19-րդ, էջ՝ 301): Այս բանը Լենինն ընդգծում է վոչ միայն «Իմպերիալիզմը և սոցիալիզմի պառակտումը» հոդվածում, վորից և վերցված է ավյալ մեջբերումը, այլ և իր մյուս աշխատություններում և բազմիցս՝ կապիտալիզմի բարձր ստադիային նվիրված իր գլխավոր աշխատություն մեջ, այսինքն՝ «Իմպերիալիզմ»-ում: Նա այստեղ գրում է, վոր «մոնոպոլիստ կապիտալիզմի նորադույն Փազի վերջին խոսքն է», վոր «տնտեսական մոնոպոլիստի մեջ է ամեն բան», վոր «արտադրության կենտրոնացման հետևանքով մոնոպոլիստների առաջ գալն ընդհանրապես հանդիսանում է կապիտալիզմի զարգացման ժամանակակից ստադիայի ընդհանուր և հիմնական որենքը» (Յերկերի ժող. 19-րդ հատոր, էջ՝ 207, 85):

Մարքսը կապիտալիստական կուտակման իր տեսութեան մեջ վերլուծելով կապիտալի համակենտրոնացման և կենտրոնացման հիմունքները և ելությունը, նրանց անխուսափելիութիւնը և անհրաժեշտութիւնը, արդէն դրանով իսկ բանալի տվեց հասկանալու, թե ինչպե՞ս և ինչո՞ւ յետագայ մրցակցութիւնը փոխարինվո՞ւմ մոնոպոլիայով: — «Յուրաքանչյուր կուտակում, — գրում էր Մարքսը, — դառնում է նոր կուտակման միջոց: Վորպես կապիտալ գործադրվող հարստութեան զանգվածի մեծացման հետ միասին նա մեծացնում է նրա կոնցենտրացիան առանձին կապիտալիստներին ձեռքում և այդպիսով ընդարձակում են մեծ չափով արտադրութեան հիմքն ու արտադրութեան սպեցիֆիկ կապիտալիստական մեթոդները» («Капитал» հատոր I, էջ 497): Իսկ կապիտալի կենտրոնացումը վորպես «համակենտրոնացում դումարված կապիտալներին», լրացնում է այդ պրոցեսը նրանով, վոր վոչ միայն ուժեղացնում է արտադրական միավորների աճը և չափը, այլև կրճատում է իրար դեմ մրցող կապիտալիստներին թիվը:

Լենինը նախ և առաջ հենց արտադրութեան համակենտրոնացման մարքսյան ուսմունքի հիման վրա բաց արեց մոնոպոլիաների անհրաժեշտ ծագման արմատները: Նա ցույց տվեց, վոր մոնոպոլիայի գլխավոր շտակը հանդիսանում է կապիտալիստական արտադրութեան համակենտրոնացումը, վորովհետև վերջինս իր զարգացման վորոչ աստիճանի վրա չի կարող ընդհուպ չմոտեցնել մոնոպոլիային, քանի վոր նախ՝ ուժեղ համակենտրոնացման բաղադր վրա առաջ յեկած հսկայական ձեռնարկութիւնների համար հեշտ է իրար հետ համաձայնութեան դալ և յերկրորդ՝ ձեռնարկութիւնների խոշորացման և նրանց արտադրութեան չափերի ընդարձակման հետ հենց սերտորեն կապված են մրցակցութեան պայքարի դժվարութիւնները և տենդենցը՝ դեպի մոնոպոլիաները:

Լենինը սպառնիչ կերպով հիմնավորելով այն ճշմարտութիւնը, վոր մոնոպոլիաների, կապիտալիզմի վերջին ստադիայի այդ կարևորագույն յերևույթի առաջացման սպենսիտը հիմքը հանդիսանում է հենց արտադրութեան համակենտրոնացումը, դրանով իսկ ջատկանց Հիլֆերդինգի և Բնկ. փորձերը՝ այստեղ

ևս առաջ մղելու իրենց մաշված փոխանակային (МЕНОВАЯ) կոնցեպցիան: Փաստ չէ՞ միթե, վոր Հիլֆերդինգը նույնիսկ իր «Ֆինանսական կապիտալ»-ում չի ել մտածում ընդդէմ, վոր կապիտալիստական արտադրութեան համակենտրոնացման զարգացման վորոչ աստիճանով է անհրաժեշտորեն պայմանավորվում մոնոպոլիաների առաջացումը. ընդհակառակը, նա իր բացատրութիւնների մեջ փոխանակային և այլ միջանկյալ հարաբերութիւնների վրա յի: բեռում իր ուշադրութիւնը: Այդ միանգամայն հասկանալի յե, յեթե նկատի ունենանք ռենդաւտներին ղեկավարող ձգտումը. այն է՝ իմպերիալիզմը կտրել կապիտալիստական արտադրական յեղանակի զարգացումից՝ վորպես արտաքին մի պատահականութիւն, այլ վոչ թե վորպես իմանենաւ անհրաժեշտութեան վրա հենված ետապ, կապիտալիզմի զարգացման վերջին ետապը:

Լենինը կապիտալիստական արտադրութեան համակենտրոնացումը դիտելով վորպես ամենախոր հիմքը մոնոպոլիաների առաջացման, չեր անտեսում, այլ այդ Փոնի վրա արժեքավորում էր նաև մյուս մոմենտների նշանակութիւնը: Նա ցույց էր տալիս բանկերի դերի փոփոխութիւնը, յերբ նրանք հանդէս գալով արդէն վոչ վորպես սոսկական միջնորդներ, այլ վորպես Ֆինանսական կապիտալի ոլիգարխներ, իրենց աղբեցութիւնն ու իշխանութիւնը տարածում են բազմաթիւ խոշոր ձեռնարկութիւնների վրա և կոթնած տնտեսական այդ ուժին, նույնիսկ դառնում են բուրժուազիայի պետական որդանի տնորինողներ: Այնուհետև, նա ցույց է տալիս զաղութային քաղաքականութեան հիմունքների մեջ արձանագրվող այն նորութիւնը, յերբ աշխարհը բաժանված-վերջացած լինելու պայմաններում, վորպեսզի կարելի լինի ապահովել հումութի աղբյուրներով և կապիտալի ձեռնտու արտածութեամբ ու գործադրութեամբ, կենսական անհրաժեշտութիւն է դառնում մենաշնորհ կերպով իշխելու զաղութներում:

Մարքսը և Ենգելսն ականատես եյին լոկ այն անցման շրջանին, վորը տանում էր դեպի կապիտալիզմի զարգացման մեջ տեղի ունեցող այդ նոր տեղաշարժերի բյուրեղացումը, իսկ այդ շրջանի մանրամասն անալիզը վիճակից տալ նրանց լավագույն

Մարքսը կապիտալիստական կուտակման իր տեսութեան մեջ վերլուծելով կապիտալի համակենտրոնացման և կենտրոնացման հիմունքները և ելությունը, նրանց անխուսափելիութունը և անհրաժեշտութունը, արդեն դրանով իսկ բանալի տվեց հասկանալու, թե ինչպե՞ս և ինչո՞ւ յե ազատ մրցակցութունը փոխարինվո՞ւմ մոնոպոլիայով: — «Յուրաքանչյուր կուտակում, — դրում էր Մարքսը, — դառնում է նոր կուտակման միջոց: Վորպես կապիտալ գործադրվող հարստության զանգվածի մեծացման հետ միասին նա մեծացնում է նրա կոնցենտրացիան առանձին կապիտալիստների ձեռքում և այդպիսով ընդարձակվում են մեծ չափով արտադրության հիմքն ու արտադրության սպեցիֆիկ կապիտալիստական մեթոդները» («Капитал» հատոր I, էջ 497): Իսկ կապիտալի կենտրոնացումը վորպես «համակենտրոնացում դումարված կապիտալների», լրացնում է այդ պրոցեսը նրանով, վոր վոչ միայն ուժեղացնում է արտադրական միավորների աճը և չափը, այլև կրճատում է իրար դեմ մրցող կապիտալիստների թիվը:

Լենինը նախ և առաջ հենց արտադրության համակենտրոնացման մարքսյան ուսմունքի հիման վրա բաց արեց մոնոպոլիաների անհրաժեշտ ծագման արմատները: Նա ցույց տվեց, վոր մոնոպոլիայի գլխավոր շտակը հանդիսանում է կապիտալիստական արտադրության համակենտրոնացումը, վորովհետև վերջինս իր զարգացման վորոշ աստիճանի վրա չի կարող ընդհուպ չմոտեցնել մոնոպոլիային, քանի վոր նախ՝ ուժեղ համակենտրոնացման բաղադր վրա առաջ յեկած հսկայական ձեռնարկությունների համար հեշտ է իրար հետ համաձայնության դալ և յերկրորդ՝ ձեռնարկությունների խոշորացման և նրանց արտադրության չափերի ընդարձակման հետ հենց սերտորեն կապված են մրցակցության պայքարի դժվարությունները և տենդենցը՝ դեպի մոնոպոլիաները:

Լենինը սպառիչ կերպով հիմնավորելով այն ճշմարտությունը, վոր մոնոպոլիաների, կապիտալիզմի վերջին ստադիայի այդ կարևորագույն յերևույթի առաջացման սպենախոր հիմքը հանդիսանում է հենց արտադրության համակենտրոնացումը, դրանով իսկ ջանջախեց Հիլֆերդինգի և Ընկ. փորձերը՝ այստեղ

ևս առաջ մղելու իրենց մաշված փոխանակային (меновая) կոնցեպցիան: Փաստ չե՞ միթե, վոր Հիլֆերդինգը նույնիսկ իր «Ֆինանսական կապիտալ»-ում չի ել մտածում ընդգծել, վոր կապիտալիստական արտադրության համակենտրոնացման դարգացման վորոշ աստիճանով է անհրաժեշտորեն պայմանավորվում մոնոպոլիաների առաջացումը. ընդհակառակը, նա իր բացատրությունների մեջ փոխանակային և այլ միջանկյալ հարաբերությունների վրա յի բեռնում իր ուշադրությունը: Այդ բերությունների վրա յի բեռնում իր ուշադրությունը: Այդ միանգամայն հասկանալի յե, յեթե նկատի ունենանք ունեգատներին դեկավարող ձգտումը. այն է՝ խմպերիալիզմը կտրել կապիտալիստական արտադրական յեղանակի զարգացումից՝ վորպես արտաքին մի պատահականություն, այլ վոչ թե վորպես իմանենտ անհրաժեշտության վրա հենված ետապ, կապիտալիզմի զարգացման վերջին ետապը:

Լենինը կապիտալիստական արտադրության համակենտրոնացումը դիտելով վորպես ամենախոր հիմքը մոնոպոլիաների առաջացման, չեր անտեսում, այլ այդ Փոնի վրա արժեքավորում էր նաև մյուս մոմենտների նշանակութունը: Նա ցույց եր տալիս բանկերի դերի փոփոխությունը, յերբ նրանք հանդես գալով արդեն վոչ վորպես սոսկական միջնորդներ, այլ վորպես Ֆինանսական կապիտալի ոլիգարխներ, իրենց աղբյուցությունն ու իշխանությունը տարածում են բազմաթիվ խոշոր ձեռնարկությունների վրա և կոթնած տնտեսական այդ ուժին, նույնիսկ դառնում են բուրժուազիայի պետական որդանի տնորինողներ: Այնուհետև, նա ցույց է տալիս դադութային քաղաքականության հիմունքների մեջ արձանագրվող այն նորությունը, յերբ աշխարհը բաժանված վերջացած լինելու պայմաններում, վորպես զի կարելի լինի սպահնովել հումութի աղբյուրներով և կապիտալի ձեռնտու արտածությամբ ու գործադրությամբ, կենսական անհրաժեշտություն է դառնում մենաչեորհ կերպով իշխելու դադութներում:

Մարքսը և Ենգելսն ակնատես եյին լոկ այն անցման շրջանին, վորը տանում էր դեպի կապիտալիզմի զարգացման մեջ տեղի ունեցող այդ նոր տեղաշարժերի բյուրեղացումը, իսկ այդ շրջանի մանրամասն անալիզը վիճակվեց տալ նրանց լավագույն

աշակերտներին՝ Լենինին և Ստալինին: Յեւ իսկապես, Լենինը և Ստալինը բազմակողմանիորեն բացահայտելով կապիտալիզմի բարձրագույն ստադիայի «վերջին խոսքը»—մոնոպոլիայի եյու-թյունը, լուսաբանեցին, թե ինչո՞ւ մոնոպոլիստական կապիտա-լիզմը պետք է մժուական նշանակութուն հաղորդեր զարգացման անհավասարաչափության որենքին և այդ ամենից հանեցին ա-մենաարժեքավոր յեղրակացություններ միջադպիսին պրոյետա-րիատի պայքարի ստրատեգիայի և տակտիկայի համար:

Մենք ցույց տվինք, վոր կապիտալիզմի անհավասարաչափ զարգացման որենքը չպետք է դիտվի կապիտալիզմի հիմնական հակասության, այն է՝ արտադրության հասարակական բնույթի և մասնավոր-կապիտալիստական յուրացման միջև յեղած հակասության ու դրանից բղխած մյուս հակասությունների հետ ունեցած կապերից դուրս, վորովհետև այդ որենքն ինքը հան-դիսանում է վերջին հաշվով կապիտալիզմի այդ հիմնական հա-կասության կոնկրետ արտահայտություններից մեկը: Յեւ յեթե այդ աղպես է, իսկ դա իսկապես վոր աղպես է, ապա ինք-նրստինքյան հասկանալի յե, վոր արտադրության հասարակա-կան բնույթի և կապիտալիստական յուրացման միջև դոյու-թյուն ունեցող հիմնական հակասության ուժեղանալը և սրվելը չի կարող անհետևանք անցնել կապիտալիզմի անհավասարաչափ զարգացման որենքի համար և չի կարող իր հերթին այդ որեն-քի արտահայտության մեջ առաջ չբերել ուժեղացում ու սրում և ընդհանրապես վորակային փոփոխություն:

Այդ պատճառով, վորպեսզի ճիշտ հասկանանք կապիտալիզմի անհավասարաչափ զարգացման որենքի մոդիֆիկացիայի հի-մունքներն իմպերիալիզմի շրջանում, կարևոր է պարզել, թե ինչո՞ւ և ի՞նչպես մոնոպոլիստական կապիտալիզմը պետք է ան-հրաժեշտարար ուժեղացնի և սրի կապիտալիզմի հիմնական հա-կասությունը և նրանից բղխող մյուս հակասությունները:

Մարքսն արդեն «կապիտալ»-ի I հատորում սպառնիչ կեր-պով ցույց տվեց և պարզեց համակենտրոնացման դերը հան-րայնացման պրոցեսում: «Արդյունաբերական ձեռնարկություն-ների չափերի աճը,—գրում է նա,—ամենուրեք յեյակետ է ծա-ռայում շատերի համատեղ աշխատանքն ավելի ընդարձակ չա-

փերով կազմակերպելու համար, ավելի լայնորեն զարգացնելու համար նրա նյութական շարժող ուժերը, այսինքն՝ արտադրու-թյան դատ-դատ և հետամնաց պրոցեսները պրոդրեսիվ կերպով զարձնելու հասարակականորեն միավորված և զիտականորեն ղեկավարվող արտադրության պրոցեսներ («Капитал», հատոր I, էջ 499):

Յեւ ահա մոնոպոլիան ծնվելով բարձր զարգացած կոն-ցենտրացիայի հիման վրա, ընդգրկելով զերադանցապես դի-զանները, իր հերթին ավելի շատ է ընդարձակում իր այդ հիմքը, ասել է թե՛ կոնցենտրացիան չեղած չափերի յե հասց-նում:

Մենք նպատակ չունենալով մանրամասն իլլյուստրացիա կա-տարելու այս հարցի վերաբերյալ, բերենք միայն մի քանի թվեր ընդհանուր գաղափար կազմելու համար կոնցենտրացիայի չափերի մասին: Գերմանիայում 1925 թվականին կային հինգ հազար և ավելի բանվորներ ունեցող 66 ձեռնարկություններ, վորոնց մեխանիկական շարժիչները 2 անգամ ավելի կարողու-թյուն ունեյին, քան 1,36 միլիոն մանր ձեռնարկությունների շարժիչները՝ միասին վերցրած: ԱՄՆ-ում նույն թվին 1000-ից ավելի բանվոր ունեյին 996 ձեռնարկություններ, վորոնց մեխա-նիկական շարժիչների կարողությունը կազմում էր 12 միլիոն ձիու ուժ, մոտավորապես 2/3-ը Գերմանիայի վողջ արդյունա-բերության մեջ յեղածի:

Իսկ ի՞նչ է նշանակում համակենտրոնացման այսպիսի ա-տիճանը, յեթե վոչ, հանրայնացման պրոցեսի վիթխարի աճում և արտադրության հասարակական բնույթի ավելի ուժեղ ընդ-գծում՝ կապիտալիստական յուրացման անձեռնմխելիության պայմաններում:

Այստեղ շնորհիվ ձեռնարկությունների և նրանց արտա-դրության խոշոր չափերի, չափազանց ընդարձակվում են աշ-խատանքի ավելի հմուտ և համաձայնեցրած կազմակերպման, արտադրական պրոցեսների ռացիոնալացման և տեխնիկական գյուտերն ու կատարելագործումները ավելի լավ և արդյունա-վետ հիմքերի վրա դնելու հնարավորությունները: Չի կարելի ժխտել, վոր կոնվեյերային սիստեմը, վորն իր կապիտալիստա-

կան զործադրութեամբ դարձել և բանվորների քրտինքը քամելու սարսափելի միջոց՝ շահավետ կերպով կարելի չէ ոգտագործել լոկ ամենախոշոր ձեռնարկություններում: Հետո, միայն մոնոպոլիստական գիղգանտներին և մատչելի լայն ենեղող-գինվածությունը և գիտութեան ու տեխնիկայի այնպիսի հրաշալիքների զործադրությունը, ինչպիսիք են բլյուսինգը, շտենկելյան մամլիչ դաղդյահը և այլն. միայն այդպիսի ձեռնարկությունները կարող են նախաձեռնել այնպիսի համարձակ փորձերի, ինչպես որինակ մարաեկայն յեղանակի կիրառման փոխարեն քիմիական թթվեցման միջոցով մետաղ ստանալը: Ավելացրեք այդ ամենին մոնոպոլիստական գիղգանտների ձեռքում կենտրոնացած հանրավայրերի և նրանց շահագործման հեռանկարների հաշվառման կազմակերպումը, վորակյալ բանվորական և ինժեներական ուժերի գերադասեց չափով կենտրոնացումն ու ոգտագործումը գիղգանտներում և այս ամենի ֆոնի վրա համաշխարհային շուկայի դերի անհամեմատ բարձրանալը, և այն ժամանակ կարելի կլինի պատկերացնել, թե ի՞նչ աստիճան պարզ և զծաղբվում արտադրութեան հասարակական բնույթը կապիտալիստական յուրացման պայմաններում ն, հետևապես, ի՞նչ աստիճան սրվում և կապիտալիզմի այս հիմնական հակասությունը: «Արտադրությունը, — գրում է Լենինը, — դառնում է հասարակական, բայց յուրացումը մնում է մասնավոր: Արտադրութեան հասարակական միջոցները մնում են վորքաբանակ մարդկանց մասնավոր սեփականություն»: («Сочинения», հատ. 19-րդ, էջ՝ 89):

VI

Լենինը խոսելով այն մասին, վոր ազատ մրցակցութեան տեղի տալը մոնոպոլիայի առաջ, վերջինովս փոխարինվելը հանգիսանում է իմպերիալիզմի տնտեսական ելուժյուն, բնորոշելով իմպերիալիզմը հենց մոնոպոլիայով, միաժամանակ միշտ առանձնապես ընդգծել է մոնոպոլիայի ահա այս կապիտալիստական բնույթը, յերբ դա վոր միայն չի վերացնում կապիտալիզմի հիմնական հակասությունը, այլ ընդհակառակը, այդ հակասությունն ուժեղացնում է և սրում: Յեթե կապիտալիստա-

կան յուրացումը մնում է իր լիակատար ուժի մեջ, ապա ազատ մրցակցութեանը փոխարինող մոնոպոլիան անխուսափելիորեն հանդես է դալլա վոր միայն վորպես հետևանք, արդյունք վերացակցութեան, այլ վորպես յեյակետ և սկիզբ մրցակցութեան նոր և ել ավելի կատաղի ձևերի, լուծելու համար կապիտալիստը և ել ավելի կատաղի ձևերի, լուծելու համար այն, թե «գորդյան հանգույցը», այսինքն՝ վճռելու համար այն, թե վոր մոնոպոլիստը կամ մոնոպոլիստների վոր խումբը պետք է անմիջական արտադրողներեց լատ հնարավորին շատ հավելյալ արժեք քամի և սեփականացնի:

Մարքսը Պրուզոնի հետ ունեցած պոլեմիկայում հանճարեղ կերպով նախատեսեց մրցակցութեան և մոնոպոլիայի այս դիալեկտիկան: «Պրակտիկ կյանքում, — գրում է նա, — մենք հանգիսում ենք վոր միայն մրցակցութեան, մոնոպոլիայի և նրանց անտադոնիզմին, այլ նույնպես նրանց համադրութեանը, վորը վոր թե ֆորմուլ է, այլ շարժում: Մոնոպոլիան մրցակցություն է առաջացնում, մրցակցությունը՝ մոնոպոլիա: Մոնոպոլիստները մրցակցում են իրար հետ, մրցակիցները դառնում են մոնոպոլիստներ... Համադրությունն այն է, վոր մոնոպոլիան կարող է դիմանալ լոկ մշտական մրցակցութեան պայքար մղելու շնորհիվ» («Нипета философии», էջ՝ 133):

Նույն միտքն է նա արտահայտում Անենկովին ուղղած իր նամակում: Այստեղ Մարքսն ընդգծում է, վոր մրցակցութեան և մոնոպոլիայի այս փոխադարձ անցումը և փոխադարձ ներթափանցումը կապիտալիզմի համար «ստեղծում է ավելի դժվարին և ավելի խճճված դրություն» (նույն տեղում, էջ 166): Հենց այդպիսի դիալեկտիկական վորով է ներծծված մոնոպոլիայի լենինյան անալիզը:

Լենինն անողք կերպով իարազանում և մերկացնում էր նրանց, ովքեր փորձում էին հաշիի չառնել իմպերիալիզմի իրականութեան, վոր թե առերևութային ու մտացածին, այլ կոնկրետ իրականութեան բաղմակողմանիությունը, բաղմերանդությունը և հակասականությունը: Այդպիսի փորձերով, ինչպես հայտնի յե, քիչ ջանք չի թափել ընկեր Բուխարինը, դեռ, որինակ, կուսակցութեան համար նոր ծրագիր կազմելու

շուրջը տեղի ունեցող դիսկուսիայի կապակցութեամբ: Քմահած կերպով արատուրտի վերածել, գունալորել իմպերիալիզմի, իմպերիալիստական մոնոպոլիայի սուանձին կողմերը, դրա հիման վրա հորինել մաքուր իմպերիալիզմի միբաթ, — եւ ուրիշ ի՞նչը կարող եւ ավելի վոչ դիտական, հակամարքսիստական լինել, քան իմպերիալիզմի հակասական իրականութիւնը պճնադարդող այս անսանձ արատրակցիան:

Իմպերիալիստական ամենահասունացած եւ ամենատիպիկ յերկրում իսկ մոնոպոլիստական կապիտալիզմը չի կարող բուրովին արմատախիլ անել ազատ մրցակցութիւնը վորոչ ճյուղերում, եւ ինչպէս գրում եւ Լենինը՝ «մոնոպոլիաներն ամելով ազատ մրցակցութիւնից, չեն վերացնում այն, այլ գոյութիւն ունեն նրա վրա եւ նրա հետ միասին, դրանով ծնելով մի շարք հատկապէս սուր հակասութիւններ, բաղխումներ, կոնֆլիկտներ» («Сочинения», հատ. 19-րդ, էջ 142):

Իմպերիալիզմը չվերացնելով մրցակցութեան եւ մոնոպոլիայի հակադրութիւնները միասնութիւնը, հատուկ կերպարանք եւ տալիս նրանց փոխադարձ ներթափանցմանը, յերբ առաջին սղան եւ քաջովում ամենահրեշտավոր մրցակցութիւնը մոնոպոլիստական միափորումների միջեւ, յերբ ավելի քան տեղին եւ Մարքսի վերահիշյալ նկատողութիւնը, թե՛ մրցակցութեան եւ մոնոպոլիայի գլխալեկտիկան միայն ավելի յե դժվարացնում եւ խճճում կապիտալիզմի գործերը, յերբ բոլոր գծերով խորանում եւ և սրվում կապիտալիստական արտադրական յեղանակի անխխտանական բնույթը, քառասնութիւնը: Պարզ եւ, վոր այդպիսի պայմաններում խոսք անգամ չի կարող լինել կապիտալիզմի դարգացման անհավասարաչափութեան նվազման կամ թուլացման մասին:

Յեւ յեթե այնուամենայնիւ Տրոցկին salto-mortale-ով ջանում եր թռչել այդ պայմանների վրայով, հավաստել, վոր թուլանում եւ կապիտալիզմի դարգացման անհավասարաչափութիւնը, այդ արդեն վերաբերում եւ սուղոգետիկ լարախաղացի խելապատակի տարողութեանն ու կարողութեանը:

Մենք խոսեցինք աճող հանրայնացման եւ նրա մոնոպոլիստական ձեւի մասին, վորպէս բարձր կետի՝ հիմնական հակա-

սութեան դարգացման: Իսկ դա, իհարկեւ, չի կարող վերին աստիճանի անհավասարաչափութիւնը չմտցնել մի կողմից բարձր չափերով կենտրոնացած եւ հանրայնացած մոնոպոլիստական ձեռնարկութիւնները, իսկ մյուս կողմից՝ «վայրենի» ձեռնարկութիւնները դարգացման մեջ եւ չխորացնել նրանց միջեւ անկութիւնները (վորից այնպէս քնքշորեն հրաժարվում ե Տրոցկին), յեղուկը (վորից այնպէս քնքշորեն հրաժարվում ե Լենինը՝ «մաքուր թե նկատի ունենանք, վոր, ինչպէս գրում ե Լենինը՝ «մաքուր իմպերիալիզմն առանց կապիտալիզմի հիմնական բաղալի յերբեք գոյութիւն չի ունեցել վոչ մի տեղ, գոյութիւն չունի ե յերբեք գոյութիւն չի ունենա» («Сочинения», էջ 131):

Այս իհարկեւ, խնդրի գեռ մի մասն ե, վորովհետեւ կենտրոնացման պրոցեսում ընդհանրապէս նկատվում ե անհավասարաչափութիւն: Իսկ ի՞նչ ե բղխում նրանից, վոր ամենալայն կոնցենտրացիան ե բաղմակողմանի հանրայնացումը կամ այլ կերպցենտրացիան ե բաղմակողմանի արտահայտված արտադրութեան ասած՝ այնպէս շոշափելիորեն արտահայտված արտադրութեան հասարակական բնույթը հանդես ե գալիս մոնոպոլիայի ձեռով: Այս հարցը մեզ նկատել ե տալիս, վոր արագ աճը ե նեխումը մոնոպոլիայի մեջ յերկու ընդդիմադիր տեղեկեցներ են, վորոնք սերտորեն կապված են ձեւի ե բովանդակութեան պառակտման մեր մատնանշած խորացման հետ ե, ավելին, պայմանավորված են վերջինով, վորը հոմանիշ ե կապիտալիզմի հիմնական հակասութեան սրմանը:

Մարքսն աչքի առաջ ունենալով ընդհանրապէս աշխատանքի միջոցների գործադրութեան կապիտալիստական ձեւը՝ գրում եր. — «Մի կողմից այն հանգամանքը, վոր հիմնական կապիտալի դանդախածը ներդրվում ե գործի մեջ վորոչ բնական ձեռով ե պետք ե գոյութիւն ունենա այնտեղ կյանքի վորոչ միջին ժամկետ, պատճառ ե դառնում, վոր մեքենաները ե այլն մտցվեն միայն աստիճանաբար ե այդ պատճառով արդեւք են հանդիսանում աշխատանքի կատարելագործված միջոցների արագ ե համատարած գործադրութեան: Բայց մյուս կողմից՝ մրցակցութեան սուանձնապէս վճռական հեղաշրջումներին ուղեկցող պայքարն ստիպում ե փոխարինել աշխատանքի հին միջոցները, դեռեւ, մինչեւ նրանց բնական մահը, աշխատանքը նոր միջոցներով» («Капитал», հատ. 2-րդ, էջ 142):

Մարքան ալստեղ աղբյուրով ընդդրում է, վոր աշխատանքի միջոցների գործադրութեան կապիտալիստական ձևի հետ կապված է նոր տեխնիկայի, կատարելագործված մեքենաների անհավասարաչափ գործադրութեանը: Յեթե մրցութեանը կարող է մտցնել վորոշ ուղղումներ այս անհավասարաչափութեան մեջ, պարտադրելով կատարել մշտական կապիտալի վաղաժամ վերակառուցում, ապա աղբյուրով վերջին հաշվով ընդարձակում է անհավասարաչափութեան դաշտը, վորովհետև մշտական կապիտալի յուրաքանչյուր արժատական վերակառուցում ավելի է ավելի կրճատում է նրա ձևուցութեանը և առաձգականութեանը նոր հեղաշրջումների անհրաժեշտութեան հանդեպ, հեղաշրջումներ, վորոնք ըլխում են արտադրութեան կապիտալիստական յեղանակի տեխնիկական հիմքի հեղափոխական բնույթից:

Աշխատանքի միջոցների կապիտալիստական դրութեան տրվյալ ատրիբուտն առանձնապես ցայտուն կերպով արտահայտվում է մոնոպոլիստական կապիտալիզմի ժամանակ: Մոնոպոլիստները ծնվելով մրցակցութեան վոթորկում, հենվում են նույնպես մրցակցութեան վրա, վորպեսզի հաղթահարեն իրենց մրցակիցներին, վորպեսզի վերջնականապես պահեն իրենց ձեռքում և հնարավորութեան չափ ավելի ընդարձակեն գերազուցթի մոնոպոլիստական տիրապետութեան գոտիներն ու աղբյուրները: Նրանք այդ մրցակցութեան ձեռքն առնելու ստիպված են այս կամ այն չափով դիմելու արտադրողական ուժերի, տեխնիկայի զարգացման հսկայական հնարավորութեաններին ողտադործմանը, վորոնք (հնարավորութեանները) ներփակված են արտադրութեան հասարակական բնույթի մեջ, վորը, ինչպես ասինք, մոնոպոլիստական կապիտալիզմի ժամանակ ավելի յե շեշտվում: Այստեղից էլ առաջ է դալիս ըլլում ինչի, ստանկոմիսնատի և այլ կատարելագործված միջոցների գործադրութեան պրակտիկան, այստեղից էլ կյանքի յե կոչվում հոչակված Փորդիզմը և այլն: Ահա ի՛նչի մեջ է արտահայտվում մոնոպոլիստի տենդենցներից մեկը:

Իայց բանն այն է, վոր այդ բոլոր կատարելագործութեաններն անխուսափելիորեն կապված են հիմնական կապիտալի հսկայական ուռճացման հետ, վորովիսի հանդամանքն ընդ-

հանրապես չի կարող վորոշակի կերպով չկապել ինվեստիցիա կատարողների ձեռքերը, վորի մասին Մարքսը վերոհիշյալ մեջբերման մեջ մատնացույց է անում. իսկ մենաշնորհային դրութեանն ուղղակի մղում է առաջ բերում հանդէլու դափնիներ թյունն ուղղակի մղում է առաջ բերում այլ տենդենց, ուրիշ խոսքով՝ նեվրա, արտահայտելու արդեն այլ տենդենց, վորպես մրցակցութեան հատուկ ձև, յերը նեխովոյ մոնոպոլիստներն ամեն կերպ կաշկանդում են արժեքավոր տեխնիկական-ուսցիտնալիզատորական նորամուծութեանների գործադրութեանը, յերը բաղմաթիվ նոր դյուտերի իրավունքը (պատենտը) գնում են մոնոպոլիստները և թողնում անգործադրելի, վորպեսզի զրկեն իրենց մըրցակիցներին դրանք ողտադործելու հնարավորութեանից:

Չխոսելով Լենինի «Իմպերիալիզմ» դրքում բերած հանրաժանութ որինակի մասին (Ուենսի շիշ պատրաստող մեքենայի պատենտն անողտադործելի թողնելը), հենց բավական է միայն նշել ժամանակակից այնպիսի փաստեր, ինչպես որինակ՝ սինթետիկ բեղինի արտադրութեան խափանումը (պատենտը գնել է տիկ բեղինի արտադրութեան խափանումը (պատենտը գնել է սինթետիկ կաուչուկի արտադրութեան գործի արգելակումը (ի միջի թետիկ կաուչուկի արտադրութեան գործի արգելակումը (ի միջի այլոց դա այն ժամանակ, յերը տվյալ պրոբլեմն արդեն վճռված է ՍՄՇ-ում), քիմիական միջոցներով մետաղներ պատրաստելու հոյակապ դյուտը լայնորեն գործադրելու ասպարիզում հանդես բերվող ձգձգումները և այլն, և այլն:

Նեխման այս ձևը սակայն, յերբեք չի կարող դառնալ մըրցակցութեան միակ և բացարձակ ձևը, վորովհետև նա միայն հակադրվելով արտադրողական ուժերի զարգացման միջոցով մրցակցութեան ձևին՝ ստանում է մրցակցութեան հատուկ ձևի նշանակութեան: Չե՞ վոր պետք է լինի անմիջական սպառնալիք նշանակութեան մտցնելու ուղղութեամբ, վորոնոր կատարելագործութեաններ մտցնելու ուղղութեամբ, արգելակելու և դժվար պեսզի ձգտում առաջ դա խանգարելու, արգելակելու և դժվար պեսզի ձգտում առաջ դա խանգարումը: Ընդհանրապես ասած, ինչպես բացնելու դրանց իրագործումը: Ընդհանրապես ասած, ինչպես դրում է Լենինը՝ «արտադրութեան ծախքերն իջեցնելու տեխնիկական բարելավումների գործադրութեան միջոցով շահույթը բարձրացնելու հնարավորութեանը գործում է հոգուտ փոփոխութեան» («Сочинения», հ. 19-րդ, էջ՝ 151):

Մյուս կողմից, վոչ մի մոնոպոլիա չի կարող յերաշխալորել իր դրած արգելակներն անհաղթահարելիությունը:

Այլոսմորելային «արքա» Փորդին գեմ է կանգնած «արքա» Մորգանը, մի այլ այլոսմորելային Ֆիրմայի՝ «Ջեներալ Մոտոր-սի» տերն ու տնօրենը, վորը չի կարող սառնասիրտ դիտել, թե ինչպես իր հակառակորդը գրպանում է հակայական մենաշնորհային ոգուտներ: Այն ժամանակ, յերբ Փորդը պատրաստվում է ինքնաբավական ներհեյլ՝ նրան խտում է Մորգանը հենց նրա ղենքով, փոխադրելով Փորդիգմն իր «Ջեներալ Մոտորսը» արդեն այնպիսի եյական բարելավումներով, վորոնց շատ դժվարություններով կարող է հետեւել Փորդը, հակայական ներդրումներով կապված վոտ ու ձեռով: Դրանով ել Մորգանը շատ կարճատե է դարձնում Փորդի «մեղրամիսը»:

Անդլիայում պողպատի արտադրության մոնոպոլիստները, վորպեսզի արժեքազրկեն իրենց հին, խոշոր կապիտալ ներդրումները պողպատի ձուլման պուղլինդյան և բեսսեմերյան յեղանակներն կիրառման գործում, յերկար ժամանակ աշխատում եյին դիմադրել բազիսյան կոնվերտերների գործադրությանը, վորը հնարավորություն եր տալիս խոշոր չափով կժամացնել պողպատի արտադրությունը: Այնինչ, գերմանացի պողպատ արտադրող նորելուկ մոնոպոլիստները, վորոնց ուսերին չեր ծանրանում պուղլինդյան և բեսսեմերյան բեռը, վոչ մի դժվարություն չկրեցին զնալ հոսանքի գեմ և վերցնել ու գործադրել բազիսյան կոնվերտերներն ու այդպիսով ջախջախել պուղլինդյան ու բեսսեմերյան յեղանակին կառչած իրենց Անդլիայի կուլեգաների համառությունը:

Յեւ յեղակի չեն այնպիսի փաստեր, յերբ արտադրողական ուժերի զարգացումն առաջ մղելու ձեռով մրցողները ծանծաղուտի վրա յեն նստեցնում նեխման ձեռով մրցողներին:

Դժվար չե այս ամենի մեջ նկատել անհավասարաչափ զարգացման չափազանց ուժեղանալը և նրա թուլեցած քնույթը: Այլ կերպ՝ ինչպե՞ս վորակել այնպիսի փաստ, յերբ հենց մեր նշած հանգամանքների ուժով՝ ամենազորեղ մոնոպոլիան սրընթաց աճից հետո սկսում է նեխվել, իսկ մի այլ մոնոպոլիա չանցնելով առաջինի զարգացման աստիճաններով, հան-

կարծ վոչ միայն հասնում, այլև անցնում է նրանից: Իսկ դա հնարավոր է լինում այն պատճառով, վոր վերջինս վոչ թե պարզպես վերարտադրում է նրա ամենաբարձր աստիճանը, այլև վերարտադրում է գուրս գալով նրա բացերը և ավելացնելով նոր առավելություններ, վոր նա ոգտվելով տեխնիկայի մեջ հաճախակի դարձող հեղաշրջումներով, մտցնում է այնպիսի կատարելագործություններ, վորոնց գործադրումը հակայական կապիտալ ներդրումներով իրենց ձեռքերը կարճեցրած նեխվող մոնոպոլիաների բանը չէ:

VII

Այն ամենը, ինչ բնորոշում է առանձին մոնոպոլիաների շարժումը, իհարկե, չի կարող իմպերիալիզմի ժամանակ հատուկ չլինել ընդհանուր առմամբ ազգային-տնտեսական մասսիվներն շարժմանը: Չե՞ վոր առանձին մոնոպոլիաները կախված չեն ողի մեջ, այլ զարգանում են այս կամ այն յերկրում և բանկերի հետ համաձեւու միջոցով իրենց որբխտի մեջ առնելով բուրժուական պետությունը, գերիշխող դերք են դրավում ավյալ յերկրի եկոնոմիկայում և իրենց գործմն են դնում նրա շարժման ամբողջ ընթացքի վրա: Իսկ այստեղից ել մոնոպոլիայի ման ամբողջ ընթացքի վրա: Իսկ այստեղից ել մոնոպոլիայի յերկու տեղեկեցները — արագ աճը և նեխումը՝ վորպես արտահայտություն անհավասարաչափ զարգացման ուժեղացման, նրա ընդհատվողական-թուլեցած քնույթի — չեն կարող չունենալ ազգային-տնտեսական կերպարանք:

Այսպես որինակ՝ այն ժամանակ, յերբ վերջին տասնամյակներում իմպերիալիստական Անդլիան արտահայտեց դերազանցապես նեխման, անհավասարաչափ զարգացումը սրող ընդհատվողականության տեղեկեցներ, այդ նույն ժամանակ այնպիսի համեմատաբար յերիտասարդ իմպերիալիստական յերկիր, ինչպիսին է Գերմանիան, հանդես բերելով արտադրողական ուժերի արագ աճման ուժեղ տեղեկեց՝ կատարեց այնպիսի թուլեց, վոր նախքան պատերազմը ստեղծեց այդպիսով վտանգավոր սպառնալիք Անդլիայի համար:

Այս տեսակետից, յերբեք եպիգորիկ չե մեր վերև բերած փաստը, յերբ բազիսային կոնվերտերը յերկար ժամանակ հալածվելով Անդլիայում, ընդհակառակը՝ Գերմանիայում դտնում

ե ջերմ ընդունելութուն, վորովհետև այդ փաստը հանդիսա- նում ե ընդհանուր առմամբ այդ յերկու յերկրների հակադիր տենդենցների մասնակի արտահայտութուն:

Բայց շատ դուեհիկ կլինեն և ուղղակի ճիշտ չէր լինի փնտուել վորոշակի սահմանագիծ այդ յերկու տենդենցների միջև և վե- րադրել մեկ յերկրին՝ նեխման համատարած դիծ, իսկ մյուսին՝ ած: Չե՞ վոր այնուամենայնիւ, նույն Անգլիայում, որինակ, հետպատերազմյան շրջանում պետութեան ոգնութեամբ քիչ փորձեր չարվեցին ռացիոնալիզացիայի յենթարկելու խիստ կեր- պով հետ մնացող քարածխի արդյունաբերութունը և չի կա- րելի ասել, վոր ձեռք առնված միջոցները ազարդյուն անցան:

Ուստի և խոսք կարող ե լինել միայն տենդենցի մասին, տվյալ յերկրի և տվյալ ժամանակաշրջանի համար բնորոշ տեն- դենցի մասին: Մանավանդ վոր նեխումը չի հանդում լոկ ար- տադրողական ուժերի զարգացման արհեստական կաշխատման, այլ արտահայտվում ե նաև, որինակ, դրա ուժեղացման զու- գակցող պարադիտիզմի մեջ:

Ամենայնիցս արդ իմպերիալիստական պետութունը՝ Ամե- րիկայի Միացյալ Նահանգները՝ առանձնապես աչքի ընկան զարգացման արագ և թուրջքաձև տեմպով: Բայց սա արդյոք նշանակում ե, վոր այստեղ մենք դործ ունենք լոկ աճման տեն- դենցների, այլ վոչ թե դրա հետ մեկտեղ նաև նեխման տենդենց- ների հետ: Իհարկե, վոչ: Յերբ Ամերիկայի Միացյալ Նահանգ- ներում ամենակարող «Փորդը» հենց այդ ամենակարողութեան շնորհիվ սկսեց նեխման տենդենցներ արտահայտել և այդպիսով յենթակա դառնալ «Ձեներալ Մոտորսի» հարվածներին, յերբ նա ժամանակակից տնտեսական ճգնաժամի կասկածութեամբ ավտո- մորիլային մասերի արտադրութունը բարձր տեխնիկայի վրա կառուցված զիզանտներից փոխադրեց մանր ձեռնարկութուն- ները, ապա այս, ինչպես և նման այլ փաստերը վկայում են, վոր չի կարելի մի համատարած դիծ ընդունել նեխման կամ աճի հա- մար, թեև չի կարելի ժխտել, վոր ԱՄՆ-ն իրենց արտադրողա- կան ուժերի զարգացմամբ դնում են առաջ՝ վոչ միայն Անգլիա- յից, այլև Գերմանիայից: Իսկ դա նշանակում ե, վոր, ինչպես ընդգծել են Լենինը և Մտալինը, նեխման տենդենցի բուն արտա-

հայտութեան մեջ նկատվում ե անհավասարաչափութուն և նրա ուժեղացումը:

Առավել ևս իրականութեան անթույլատրելի աղավաղում կլինի, յեթե ընդհանրապես ամբողջ իմպերիալիզմի համար վորպես արտոլլուտ դիտվի այդ յերկու տենդենցներից վորևե մեկը, վոչ միայն աճման, այլև նեխման տենդենցը:

Բոյորին հայտնի յե տրոցկիստական պրոդնոզը համապար- փակ ստադնացիայի մասին: «Յեվրոպայի արտադրողական ու- ժերը, — գրում ե Տրոցկին, — դադարել են աճելուց... մենք ու- նենք ստադնացիա» («План. хозяйств.» 1925 թ. № 6, էջ՝ 76): Իսկ մի այլ տեղ նա խոսում ե ընդհանրապես ժամանակակից կա- պիտալիզմի ստադնացիայի մասին: Այդ իր պրոդնոզի հակահեղա- փոխական, մենչևիկյան եյութունը չի կարողանում քողարկել հենց ինքը՝ Տրոցկին, յերբ աղավաղելով Մարքսի այն հայտնի գրույթը, թե կապիտալիզմի արտադրողական հարաբերութուն- ները զարգացման վորոշ աստիճանում դառնում են արտադրո- ղական ուժերի համար կապանք, նա հեղափոխական հեռանկար- ները կախման մեջ ե դնում այնպիսի արտերնատիվից՝ թե կա- պիտալիզմն առհասարակ ընդունա՞կ ե բացարձակապես զար- գացնելու արտադրողական ուժերը, թե՞ վոչ: (Տես որինակ, նրա գիրքը՝ «Նոր ետապ»):

Սա հենց զտարյուն մենչևիզմ ե, սոցիալիզմի չհասունա- ցած լինելու տեսութեան շատագուրում, վորովհետև ինչքան ել գրուա Տրոցկին իր «ստադնացիայի» մասին, փաստը մնում ե փաստ, վոր դոյութուն չունի իմպերիալիզմի ժամանակ արտա- դրողական ուժերի զարգացման ընդհանուր դադար: Տվյալ կա- պիտալիզմի մենք անհրաժեշտ ենք հատարում առանձնապես ընդգծել ստադնացիայի ապրողետիկական «տեսութեան» այլ կողմը: Դա միաժամանակ եյապես լիովին համատեղելի յե կա- պիտալիզմի անհավասարաչափ զարգացման մարվող կորագծի, նրա թուլացման մասին յեղած տրոցկիստական առասպելների հետ, վորովհետև այնտեղ, վորտեղ տեղի ունի ընդհանուր նե- խում, չի կարող խոսք լինել անհավասարաչափ զարգացման ու- ժեղացման, այդ զարգացման ընդհատվողականութեանը գուրդը:

ված թուխքածեության մասին: Այս խմատով ստաղնացիայի «տեսությունն» արժացուցում է հակահեղափոխական Տրոցկու ժխտողական դիրքը դեպի այն հատուկ տեղն ու վճռական նշանակությունը, վոր նենի կապիտալիզմի անհավասարաչափ դարգացման որենքը խմպերիալիզմի ժամանակ:

Խիստ բնորոշ է, թե ինչպիսի՞ կերպարանք է ընդունում ստաղնացիայի տեսության պրոֆեկտորի տակ անհավասարաչափ դարգացման որենքը մոնոպոլիստական կապիտալիզմի ժամանակ, որինակ, Պրեոբրաֆենսկու մոտ, այն Պրեոբրաֆենսկու, վորը, ինչպես նշեցինք, հավակնություն ունի ուղղելու Մարքսի «անհոգությունն» այդ առնչությամբ: «Աշխարհի տընտեսական դարգացման ընդհանուր տեմպի դանդաղման պայմաններում, — գրում է նա, — դարգացումը վորոշ կետերում ընդհանուր առմամբ կանգ է առնում, կամ նույնիսկ նկատվում է ռեգրեսս... ուրիշ յերկրներում առաջանում են այնպիսի հարաբերություններ, վորոնք մոտ են հասարակ վերարտադրության... յերրորդ կարգի յերկրներում տնտեսական դարգացման տեմպն ավելի արագ է միջին-համաշխարհային տեմպից» («Закат», էջ՝ 56): Ահա լեյտոմոտիվը այն ամենի, ինչ նա կամենում է ասել մեզ անհավասարաչափ դարգացման որենքի մասին:

Մինչդեռ, նա բնավ էլ ժլատ չէ ստաղնացիայի «տեսության» շողախով թխած իր դիագնոզներում: Պրեոբրաֆենսկին գրում է, վոր «վերելքի կոր գիծն ավելի ու ավելի թեքված է դեպի հասարակ արտադրությունը» (նույն տեղում, էջ 85—86), վոր «տնտեսական աստիճանական դարգացումը կանգ է առել» (էջ՝ 56), հետո մոնոպոլիզմը վորակում է վորպես «արտադրողական ուժերի դարգացումը խթանելու մշտական աղբյուր» և այլն:

Յեթե աչքի առաջ ունենանք այս ընդհանրացնող պնդումները ժամանակակից կապիտալիզմի մասին, ապա պարզ է դառնում, վոր վոչ մի տեղ չի մնում կապիտալիզմի անհավասարաչափ դարգացման որենքին, նույնիսկ իր այն անճոռնի տեսքով, ինչպես ներկայացված է Պրեոբրաֆենսկու մոտ: Յեվ հիբալի, ի՞նչ անհավասարաչափ դարգացում կարող է լինել այնտեղ, վորտեղ չկա դարգացում, այլ կա միայն ընդհանուր անշարժու-

թյուն: Այդա ուրեմն դարմանալի ի՞նչ կա, յերբ Պրեոբրաֆենսկին, չմտածելով անդամ մի բառ ասել այս որենքի արտահայտության ուժեղացման և թուխքածեության մասին՝ խմպերիատուլիզմի ժամանակ, առանց քաշվելու յերգեր է հորինում կապիտալիզմի ներդաշնակության մասին, վորը Պրեոբրաֆենսկու դեդատմանով միայն կընդհատվի վոչ այլ կերպ, քան ավտոմատիկ յիլուզումի լողեկայով և, հետևապես, ճիշտ կլինի ասել, վոր յերբեք էլ չի ընդհատվի: Ահա թե վորտե՞ղ պետք է փնտռել Պրեոբրաֆենսկին անհավասարաչափ դարգացման որենքի իսկական ժխտումը:

Իզուր չէ, վոր Լենինն խմպերիալիզմի ամենաբնորոշ գծերից մեկը համարելով նեխման տենդենցը, մատնանշելով, վոր այդ տենդենցն առանձին ճյուղերում և յերկրներում վորոշ ժամանակաշրջանում սկսում է գերակշռել, դրանից հետո ընդգծում է հետևյալը. «Միայն կլինի կարծել, — գրում է նա, — վոր նեխման առաջ տենդենցը անհնար է դարձնում կապիտալիզմի արագ աճը. այդ տենդենցը անհնար է դարձնում ճյուղեր, թուրթուղիայի վոչ. արդյունաբերության առանձին ճյուղեր, թուրթուղիայի առանձին շերտեր, առանձին յերկրներ խմպերիալիզմի շրջառում ավելի կամ պակաս ուժով արտահայտում են կամ մեկը, կամ մյուսը այդ տենդենցներից: Կապիտալիզմն ընդհանուր առմամբ անչափ ավելի արագ է աճում, քան առաջ, բայց այդ աճը վոչ միայն դառնում է ընդհանրապես ավելի անհավասարաչափ, այլև այդ անհավասարաչափությունը արտահայտվում է նույնպես կապիտալով ամենաուժեղ յերկրների մասնավորապես նեխման ասպարիզում (Անգլիա)» («Сочинения», հատ. 19, էջ՝ 172):

Լենինի այս դիալեկտիկական հարցադրումը (ըստ վորի հիշված յերկու տենդենցները վոչ թե քարացած են, այլ գտնվում են շարժման մեջ, ինչպես առհասարակ բոլոր տենդենցները) վոչ մի տեղ չի թողնում նեխման մեխանիստական արսոլյուտացմանը և նրանից հետևում է վոչ թե անհավասարաչափ դարգացման վերացումը, այլ ընդհակառակը, սրումը և թուխքավորությունը:

Սակայն, ամփոփելու համար մեր դատողությունները, վերադառնանք այն կապին, վոր ունի հիմնական հակասության սրումը կապիտալիզմի անհավասարաչափ դարգացման որենքի

արտահայտութեան մոլեղին և թուլչքածե բնույթի հետ խմպերիալիզմի շրջանում :

Թեղիսները ձևով մեր ասածներն այդ առթիվ կարելի չէ ներկայացնել հետևյալ կերպ՝ 1) Կապիտալիզմի հիմնական հակասության ծայրահեղորեն սրվելը խմպերիալիզմի շրջանում . 2) Այդ սրումի մարմնավորվելը արտադրության չտիրազանց առաջ ընթացող հասարակական բնույթի մոնոպոլիստական ձևի մեջ . 3) Խմպերիալիզմի—կապիտալիզմի այդ վերնաշենքի—կողմից մրցակցութունն ու քառասնությունը չվերացնելը, այլ ընդհակառակը—ուժեղացնելը . 4) Մրցակցութեան յերկու հիմնական հակասական ձևերը, վորպես յերկու հասարակական տենդենցների՝ արագ աճի և արագ նեխման արտահայտութուն, արտադրության կապիտալիստական յեղանակի տեխնիկական բազիսի հեղափոխականութեան Ֆոնի վրա . 5) Այստեղից՝ անհավասարաչափ զարգացման ուժեղանալը—նրա ընդհատվողական թուլչքածե բնույթը . 6) Իսկ կլիտո-եսենցիան այս ամենի այն է, վոր անհավասարաչափ զարգացման ուժեղացումը, նրա ընդհատվողական-թուլչքածե բնույթը պայմանավորված է արտադրության հասարակական բնույթի մենաշնորհային ձևով և, հետևապես, հենց իրեն, կապիտալիզմի հիմնական հակասության սրումով :

Ահա թե ինչու հազար անգամ արդարացի չէ ընկ . Ստալինը կապիտալիզմի անհավասարաչափ զարգացման որենքի իր հստակ և փայլուն բնորոշումով : «Այդ որենքը,—գրում է նա,—կայանում է նրանում, վոր առանձին ձեռնարկութունների, արեստների, արդյունաբերութեան ճյուղերի և առանձին յերկրները զարգացումը տեղի յե ունենում անհավասարաչափ, վոր թե սահմանված հերթի կարգով, վոր այնպես, վոր մեկ արեստ, արդյունաբերութեան մեկ ճյուղ կամ մեկ յերկիր բոլոր ժամանակ դնա առաջից և մյուս յերկրները հաջորդաբար հետ մնան մեկը մյուսի հետևից, այլ քաղիքաձև, յերկրների մի մասի գարգացման ընդհատումներով և մյուսների գարգացման մեջ դեպի ստաց տեղի ունեցող քաղիքների» (Ստալին, «Вопр. ленинизма», էջ՝ 83) :

Այստեղ ավելորդ էլ լինի առաջ բերել մի քանի տվյալներ մոնոպոլիստական կապիտալիզմի ժամանակ առանձին յերկրները անհավասարաչափ զարգացման ուժեղացման, նրա ընդհատվողական-թուլչքածե բնույթի մասին :

Հայտնի չէ, վոր պետք յեղան ամբողջ հարյուրամյակներ, վորպեսզի Հոլլանդիայի առաջատար դերն անցներ Անգլիային : Վերջինս հին կապիտալիզմի շրջանում նույնպես կարողացավ համեմատաբար յերկար պահպանել իր դիրքերը, վորպես «աշխարհի արհեստանոց» : Սակայն այդ ամենը՝ վաղ կապիտալիզմի և արդյունաբերական կապիտալիզմի ժամանակ :

Իսկ խմպերիալիզմի շրջանում մեկ-յերկու տասնամյակները լիովին բավական էյին, վորպեսզի առաջին պլան դուրս գային այնպիսի յերկրներ, ինչպիսիք են՝ ԱՄՆ-ը և Գերմանիան, թողնելով իրենց յետև Անգլիային : Հենց նախորդ դարի 70-80-ական թվականները, վորոնք կլասիկ կապիտալիզմից մոնոպոլիստական կապիտալիզմին անցնելու բեկման կետը հանդիսացան, ԱՄՆ-ը և Գերմանիան իրենց մրցակցութեամբ սկսեցին սացան, ԱՄՆ-ը և Գերմանիան իրենց զրույթեան հիմքերը համաշխարհայնցել Անգլիայի մենաշնորհ զրույթեան հիմքերը համաշխարհայն շուկայում, այնպես վոր արդեն Ենգելսը 1883 թ. Բեբելին «սղջած իր նամակում կարողացավ դրել այն հնարավորութեան մասին, վոր ձեռք բերին Ամերիկան և այլ արդյունաբերական մասին, վոր ձեռք բերին Ամերիկան և այլ արդյունաբերական յերկրներ՝ բացելու բավականաչափ լայն ձեղքվածք Անգլիայի մենաշնորհ դիրքի մեջ, ավելացնելով փակագծի մեջ, վոր այդ հակասութի նկատմամբ դա արդեն հեռու չէ, իսկ բամբակի համար՝ դեռ հեռու չէ» (տես «Архив» 1/7, էջ՝ 235) :

Այդպիսով, Անգլիան, վորը 19-րդ դարի սկզբից լայն կերպով գործադրում էր շողին իր գործարաններում և այդ այն ժամանակ, յերբ մյուս յերկրներում շողեմեքենաները դեռևս գործածութեան մեջ չէին մտած, Անգլիան, վորը կարողացավ այդ ժամանակներում ամբողջ աշխարհը հեղեղել իր արտադրանքներով, 19-րդ դարի վերջին այդպես հանկարծակի սկսեց կորցնել իր մենաշնորհ դիրքը : Նորագույն մեքենաների արտադրութեան ասպարիզում ԱՄՆ-ն առաջ են անցնում Անգլիայից և նույնիսկ

մեծ քանակութեամբ այդ մեքենաներից արտահանում են Անգլիա՝

Այն մասին, վոր ԱՄՆ-ը բոլոր հիմնական դժերով պետք է անցնեյին Անգլիայից՝ նախատեսում եր դեռևս Ենգլիայը.— «Այդպես, անողք անհրաժեշտութիւնը,—դրում է նա,—վորի ուժով Ֆլամանդական մանուֆակտուրաները տեղափոխվեցին Հոլանդիա, իսկ հոլանդականը՝ Անգլիա, շուտով կտեղաշարժի համաշխարհային արդյունաբերութեան կենտրոնը դեպի Միացյալ Նահանգները: Իսկ դարձուկները այն սահմանափակ դաշտում, վորտեղ կմնա այն ժամանակ Անգլիան, նա կդանի սարսափելի մրցակիցներ, հանձնու մի քանի կոնտինենտային ազգութիւնները» («Собр. Сочинения», հատոր 15-րդ, էջ 573): Յեւ ինչպես հայտնի յե, Ենգլիայի նախատեսութիւնն այդպիսի շեշտակի շրջադարձի մասին՝ լիովին իրականութիւն դարձալ իմպերիալիզմի շրջանում:

Այդ տեսակետից կարող է վորոշ հետաքրքրութիւն ներկայացնել հետեյալ աղյուսակը, վորը կազմված է Բերլինի Կոնյունկտուրային ինստիտուտի տնտեսագետների կողմից:

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼԻ ՏԵՍԱԿԵՏԻՑ ԱՌԱՆՁԻՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԲՈՒՅՈՒՄ ՏԵՂԵ ԸՍՏ ԿԱՐԳԻ, 1860—1913 թ. թ

№	1860	1870	1880	1890	1900
1.	Մեծ Բրիտ.	Մեծ Բրիտ.	ԱՄՆ	ԱՄՆ	ԱՄՆ
2.	Ֆրանսիա	ԱՄՆ	Մեծ Բրիտ.	Մեծ Բրիտ.	Գերմանիա
3.	ԱՄՆ	Ֆրանսիա	Գերմանիա	Գերմանիա	Մեծ. Բրիտ.
4.	Գերմանիա	Գերմանիա	Ֆրանսիա	Ֆրանսիա	Ֆրանսիա

Ինչպես տեսնում ենք, սկսած այն շրջանից, յերբ անցում է տեղի ունենում դեպի իմպերիալիզմը՝ ԱՄՆ-ն արտադրանքի ֆիզիկական ծավալի տեսակետից առաջ են անցնում Ֆրանսիայից, ապա՝ Մեծ Բրիտանիայից և անցյալ դարի 90-ական թվականներից սկսած զբաղում են առաջին տեղը: Իսկ Գերմանիան, վորը դնում եր նշանից, նույնպես անցնում է այն ավելի հին և առաջ-

նակարգ կապիտալիստական յերկրներից ու զբաղում է ԱՄՆ-ից հետո յերկրորդ տեղը:

Բայց արտադրանքի ֆիզիկական ծավալը՝ վորպես ցուցանիշ, ի հարկէ, դեռևս բավական չէ այս կամ այն չափով բավարար պատկերացում ստանալու համար զարգացման ընդհանուր ընթացքի վերաբերյալ:

Այդ պատճառով դիմենք այլ կարգի ավյալներին:

Յեթե վերցնելու լինենք այդ յերեք յերկրների արդյունաբերական արտադրութեան զարգացման տեմպը, մենք հետեյվյալ պատկերը կունենանք.

ԱՐԴՅՈՒՆԱՐԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ %%-ՆԵՐՈՎ (1913 թ. = 100)

Տարիներ	Մեծ Բրիտանիա	Գերմանիա	ԱՄՆ
1870	48,8	17,5	7,7
1880	52,7	24,6	17,4
1890	61,9	40,3	38,5
1900	78,8	64,7	54,2
1910	85,1	88,6	89,0
1913	100,0	100,0	100,0

Այստեղ մենք պարզ տեսնում ենք, վոր Անգլիան անցյալ դարի 70-ական թվականներին յնդել է լիարյուն արդյունաբերական յերկիր, այն ժամանակ, յերբ Գերմանիան և Ամերիկայի Միացյալ Նահանգներն արդյունաբերական զարգացման մակարդակի կողմից այնքան եյին նիհար, վոր նրանց վոչ մի դեպքում չէր կարելի ինդուստրիալ յերկիր համարել:

Տասը տարվա մեջ, սկսած 1870 թ. մինչև 1880 թ., Անգլիայի արդյունաբերական արտադրանքի աճը կազմեց 8,9%: այլիայի արդյունաբերական արտադրանքը, վորը ավեց միայն 7,1% և սինքն՝ ավելի, քան Գերմանիայում, վորը ավեց միայն 9,9%: Հետեյալ մի քիչ պակաս, քան ԱՄՆ-ը, վորն ունեցալ 9,9%: Հետեյալ տասնամյակում, սկսած 1870—1880 թ. թ. շատ ուժեղ կերպով տարձրացնում են իրենց արտադրանքի աճն ԱՄՆ-ը (21,1%) և Գերմանիան (15,7%) համեմատած Անգլիայի հետ (9,2%):

1890—1900 թ. թ. Անդրլիան տվեց այլևի մեծ աճ, քան Գերմանիան և ԱՄՆ-ը, սակայն հաջորդ տասնամյակում՝ 1900—1910 թ.թ. ԱՄՆ-ը և Գերմանիան ուղղակի թռիչք կատարեցին (առաջինը տվեց 34,8%, իսկ յերկրորդը՝ 23,9% աճ), Անդրլիայի հետ համեմատած (աճը ընդամենը՝ 6,3%):

Այսպիսով, մենք տեսնում ենք, վոր հենց իմպերիալիզմի դարաշրջանի շեմքին, փոխհարարերությունը, թեկուզ նույնպես անհավասարաչափ՝ փոփոխվում է, այնպես վոր, արդյունաբերության զարգացման մակարդակով արդեն առաջին տեղն են անցնում ԱՄՆ-ը և վոր թե Անդրլիան, վորը հետ է մղվում յերրորդ տեղը՝ Գերմանիայից հետո:

Այլևի պարզ պատկերացնելու համար արդեն ամեն աճող յերկրներին՝ ԱՄՆ-ի և Գերմանիայի անհավասարաչափ զարգացումը, բնորոշ են հետևյալ թվական տվյալները: Գերմանիայի արդյունաբերական պրոդուկցիան ամերիկականի համեմատությամբ կազմում էր 1876 թ.—90%, 1900 թ. 48, 1913 թ.—40%:

Այնուհետև, յեթե վերցնելու լինենք այդ յերեք յերկրներին արտադրության միջոցների բաժնի աճն էքսպորտում, ստանում ենք հետևյալ աղյուսակը.—

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱԺԻՆ ԵՔՍՊՈՐՏՈՒՄ

(1880 թ. = 100-ի 1913 թ. նկատմամբ)

Մեծ Բրիտանիա	300
ԱՄՆ	2100
Գերմանիա	850

Այսպիսով, Անդրլիայում կապիտալիզմի անհավասարաչափ զարգացման որևէրի ուժով 1913 թ. ստեղծվել էր արդեն այնպիսի փոխհարարերություն արտադրական միջոցների էքսպորտում, վոր Անդրլիայի նախորդ դերից՝ վորպես «աշխարհի արհեստանոցի»՝ վոչինչ չէր մնացել:

Կարելի յեր շատ աղյուսակներ և թվեր առաջ բերել, վորոնք այս կամ այն չափով կարտացոլեն նույնն առանձին ճյուղերի վերաբերյալ, սակայն սահմանափակվում ենք միայն մի քանի իլյուստրացիաներով: Աժխի արդյունահանության մեջ ԱՄՆ-ը դրեթե զերոյից 19-րդ դարի սկզբին բարձրացան 63,8 միլիոն տոննի՝ 1890 թվականին. ապա 1900 թ. ունեյին 240,8 միլ.

տոնն, իսկ 1913 թ.՝ 508,1 միլիոն տոնն: Անդրլիայում նույն ժամանակամիջոցներում մենք ունենք 10,1 միլ. տոնն, 147 միլ. տոնն, 225 միլ. տոնն և 287 միլ. տոնն: Գերմանիայում նույնպես դրեթե զերո, ապա 46,2. 107,5. 187,1, իսկ սա նշանակում է, վոր իմպերիալիզմի ժամանակ աժխի արդյունահանության մեջ ԱՄՆ-ը վոչնչությունից դարձնում են իսկական հսկա՝ Անդրլիայի հետ համեմատած, իսկ Գերմանիան արտահայտում է վորոշակի տենդենցներ՝ անցնելու Անդրլիայից:

Յեթե վերցնելու լինենք յերկաթի արտադրությունը, մենք կունենանք հետևյալ պատկերը.—1871 թ. Գերմանիան, Ռուսաստանը, ԱՄՆ-ը և Ֆրանսիան միասին վերցրած արտադրեցին 1 1/2 անգամ պակաս յերկաթ, քան Անդրլիան, մինչդեռ 1900—1913 թ.թ. ԱՄՆ և Գերմանիան թողնում են շատ յետև Անդրլիային, իսկ Ֆրանսիան և Ռուսաստանն սկսում են հասնել նրան:

Ահա համապատասխան աղյուսակ.

ՅԵՐԿԱԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1871 ԹՎԻՑ ՄԻՆՁԵՎ 1914 Թ.

(Հազար տոններով)

Յերկրներ	1871	1880	1890	1900	1910	1914
Մեծ Բրիտանիա	16,557	18,315	14,002	14,253	15,470	18,105
Գերմանիա	4,868	7,289	7,698	12,793	28,455	20,505
Ռուսաստան	791	986	1,736	6,100	4,595	9,200
Ֆրանսիա	2,100	2,874	3,472	5,448	14,606	11,251
ԱՄՆ	3,440	7,284	16,293	28,003	57,800	40,350

Հին կապիտալիզմի զարգացման 20 տարիներին ընթացքում (1871—1890 թ.) Գերմանիան յերկաթի արտադրության մեջ աճ ունեցավ միայն յերկու անգամ, իսկ մոնոպոլիստական կապիտալիզմի շրջանում (1890—1910 թ.)՝ դրեթե յերեք անգամ:

ԱՄՆ-ը 1871 թվին արտադրեցին հինգ անգամ այլևի պակաս յերկաթ, քան Անդրլիան, իսկ 1914 թ. արդեն յերեք անգամ այլևի շատ Անդրլիայից: Վերջինս, ինչպես ցույց է տալիս աղյուսակը, նույնիսկ աբսոլյուտ կերպով պակասեցրել է իր արտասակը, նույնիսկ աբսոլյուտ կերպով պակասեցրել է իր արտադրությունը իմպերիալիզմի շրջանում: Այստեղ մենք ունենք հենց մի մասնակի արտահայտություն այն բանի, թե ինչպես

անհավասարաչափ դարձացման ուժեղացումն ու թուլեցածու-
թյունը զուգորդվում են ընդհատվողականության հետ, վորը չի
կարող ավելի սուր և ցնցող կերպարանք չտալ անհավասարա-
չափ դարձացմանը:

Մի քանի խոսք այն մասին, թե ինչպես արդյունաբերության
և գյուղատնտեսության անհավասարաչափ դարձացումը իմ-
պերիալիզմի ժամանակ չափազանց ուժեղանում է գյուղատնտե-
սության ել ավելի մեծ չափով հետ մնալու իմաստով: Սրա մեջ,
իհարկե, մեծ դեր է խաղում այն հանգամանքը, վոր հողային
ունեության աճման տեղեկեցն ստանում է հատուկ մղում նրանով,
վոր «բանկի մոնոպոլիան ձուլվում է հողային սեփականության
մոնոպոլիայի հետ» (Լենին, հատոր 19-րդ, էջ՝ 115):

Բանկային մագնատների ճնշումը և կամայականությունը հո-
ղային ունեության մեծացման գծով, իր նշանակությունը արտո-
լուտ չէ իհարկե, վորովհետև կապիտալիզմի այն որինաչափու-
թյունը, վորը վորոշում է հողային ունեության աճը՝ մնում է
իր ուժի մեջ: Բայց մյուս կողմից կասկածից դուրս է, վոր հո-
ղատիրոջ համար անմատչելի սկանդալային շանտաժները բան-
կերի կողմից հողային սպեկուլյացիայի ասպարեղում՝ չէին կա-
րող չոժանդակել այդ աճին, յերբ ունեության ժամանակավոր
բարձրացումը հաճախ հետագայում պահպանվում է հողի դեմ
մեջ: Իսկ արդյունաբերական կապիտալի հետ համաձայն խոշոր
բանկերի ներգործության տնտեսական լծակները միանգամայն
բավական են այդ տեսակետից:

Բայց պետք է նկատի ունենալ, վոր մոնոպոլիատի այդպիսի
ճնշման հնարավորությունը գյուղատնտեսության վրա, ի միջի
այլոց, բացատրվում է վոչ թե նրանով, վոր այստեղ հատուկ
մոնոպոլիատական միավորություններն այնպես չէին դարձա-
նում, ինչպես արտադրության մեջ, այլ, վոր մետրոպոլիայի և
առանձնապես գաղութների ցերեցան, ծեծկված գյուղացիական
մասսաները, վորոնք միանգամայն անորը են բանկային ճնշման
դեմ՝ չափազանց հարմար որյեկտներ են, վորպեսզի նրանց կա-
ջին կարելի լինի քերթել Ֆինանսական կապիտալի պետական
հարկային սեղմիչով և կորզել նրանցից բարձր տոկոսներ ու
ամորտիզացիոն վճարումներ՝ պարտքերի համար: Քանի դեռ

այդ այդպես է, ապա ամենեին էլ սպասելի չէ, վոր անդամ կա-
պիտալիստական ամենահուշակված հողագործության մեջ՝ ԱՄ
Ն-ում մենք տեսնում ենք արդյունաբերությունից հետ մնալու
ակներև ուժեղացում:

Այդ տեսակետից բավականին ցուցանչական է, որինակ, հե-
տևյալ աղյուսակը:

ԲՈՒՈՐ ՏԵՍԱԿԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱՃԸ
(1899 = 100)

	1909	1919	1923
Տնտեսության բոլոր ճյուղերն			
առանց հողագործության	196	319	439
Հողագործություն	137	194	211

Յեթե կաուցիլին կապիտալիզմի ժամանակ գյուղատնտեսու-
թյան հետ մնալը բարդում է «բնական պատճառները» վրա, ապա
նա այդ անում է նրա համար, վորպեսզի ի հակակշիռ բոլոր փաս-
տերի, քողարկելով արդյունաբերության և գյուղատնտեսության
անհավասարաչափ դարձացման ուժեղացումը, բացահայտ հայ-
տարարի, թե հնարավոր է կապիտալիզմի ժամանակ վերացնել
գյուղի ու քաղաքի հակասությունը:

IX

Իմպերիալիզմի շրջանում կապիտալիզմի անհավասարաչափ
դարձացման վերև բերված թուլեցիկ, բայց պերճախոս իլյուստ-
րացիաներից հետո հարց է ծագում՝ ինչո՞վ էր հակահեղափո-
խական տրոցկիզմը ցանկանում հիմնավորել իր տրամադծորեն
հակառակ տեսակետը, վորն է նրա գլխավոր պատճառաբանու-
թյունը:

Վորչափ էլ այդ տարրինակ թվա, Տրոցկին նիվելիրովկա-
յի (հավասարեցման) տեղեկեցով, — վորն ընկ. Ստալինի բնորոշ-
մամբ հանդիսանում է դարձացման անհավասարաչափության ու-
ժեղացման «Փոնը և բաղան», «պայմանը», — ձգտում էր ապա-
ցուցել նրա թուլանալը: Յեթե իմպերիալիզմի ժամանակ այդ
տեղեկեցը մեծանում է (իսկ դա անկասկած է), ապա ըստ Տրոց-
կու դա նշանակում է անհավասարաչափ դարձացման թուլացում:
Իմաստակ Տրոցկու համար հասարակ բան է հավասարության

նչան դնել յերկրները՝ տվյալ մոմենտին ունեցած զարգացման մակարդակի և նրանց անհավասարաչափ զարգացման միջև և ապա հիանալ իր այդ անհեթեթու թյան վրա: Նա այդպիսով մեկ հարցը փոխարինում է մյուսով, անհավասարաչափ զարգացման հարցը՝ մակարդակի հարցով, չկամենալով հասկանալ, վոր «նիվելիրովկայի» տենդենցի մեծանալը բնայ էլ չի հակասում անհավասարաչափ զարգացման ուժեղացմանը, սրմանը և թռիչքավորությանը: «Հենց այն պատճառով, — բարբառում է Տրոցկին, — վոր Փինանսական կապիտալն ամենադյուրաշարժ և ճկուն ձևն է կապիտալի, հենց այդ պատճառով իմպերիալիզմը զարգացնում է ավելի «հավասարեցնող» տենդենցներ, քան նախաֆինանսական կապիտալը» (Стен. отчет 15-ой партконференции, էջ՝ 524):

Հենց սրա համար է ասված, վոր տգիտությունն արդումենու չէ: Հենց այն, ինչի մասին այստեղ ակնարկում է Տրոցկին՝ կապիտալի եքսպորտը, վոր հանդիսանում է իմպերիալիզմի ամենահիմնական և բնորոշ գծերից մեկը, իր հերթին ուժեղացնում է և սրում կապիտալիզմի անհամաչափ զարգացման որենքի ներգործությունը և վոր թե ընդհակառակը: Այն հանգամանքը, վոր Փրանսիական և անգլիական հսկայական ինվեստիցիաների միջոցով հետամնաց Ռուսաստանում ակնբախ կերպով ուժեղացավ արդյունաբերական զարգացումը, իսկ ընդհակառակը՝ կապիտալ արտահանող Անգլիայում զարգացման տեմպն սկսեց ավելի և ավելի կծկվել, այդ է հենց զարգացման մակարդակի հավասարեցման տենդենցը, բայց դա միաժամանակ զարգացման անհավասարաչափության ուժեղացման հետևանք ու արտահայտություն է:

ԱՄՆ-ում նույնպես անգլիական կապիտալներով հիմք դրվեց արդյունաբերություն: Դրա մեջ արտահայտվեց հավասարեցման տենդենց: Բայց մի՞թե այդ հանգամանքը վերացրեց այն փաստը, վոր ԱՄՆ-ը գլխապատույտ արագությունը սկսեցին Անգլիայից առաջ անցնել: «Հենց այն պատճառով, — ասում է ընկ. Ստալինը, — վոր հետամնաց յերկրներն արագացնում են իրենց զարգացումը և առաջնակարգ յերկրներին հավասարվելը, — հենց այդ պատճառով սրվում է պայքարը յերկրների միջև՝ իրարից առաջ անցնելու համար, հենց այդ պատճառով մի շարք

յերկրները համար հնարավորություն է ստեղծվում առաջ անցնել այդ յերկրներից և դուրս մղել նրանց շուկաներից»: («Пути мировой революции», 4. II, էջ՝ 318):

Անգլիական դոմինիոններում անգլիական (և վոր միայն անգլիական) կապիտալները արտահանման միջոցով արագորեն զարգանում է կապիտալիզմը: Այս նույնպես հավասարեցման տենդենց է: Բայց չէ՞ վոր հավասարեցման այդպիսի տենդենցն սկսեց այնպես զբաղի դառնալ զարգացման անհավասարաչափության ուժեղացման հետևանքով, ծնելով և սնելով իր հերթին դոմինիոններում անջատողական այնպիսի ձգտումներ, վոր Մեծ Բրիտանիայի կայսերական վոր մի կոնֆերենցիա և խորհուրդ է վիճակի չէ խեղդելու այդ ձգտումները:

Վերջապես, Փինանսական կապիտալը վոր միայն դոմինիոններում, այլ և գաղութներում և կիսագաղութներում, աշխարհի ամենախուլ անկյուններում ստեղծում է արդյունաբերական ձեռնարկություններ, սարքավորված տեխնիկայի և դիտությունների խոքով: Այսպես, որինակ՝ Անգլիայում արտադրվող և վերջին խոքով: Այսպես, որինակ՝ Անգլիայում արտադրվող և շնդկաստանում գործադրվող տուրբոզեներատորները կատարելագործություն տեսակետից շատ ավելի բարձր են կանգնած, քան տուրբոզեներատորները, վորոնք գործում են Անգլիայի ելեկտրակայաններում: Այստեղ առաջիններին տեղ չեն տալիս հնուց ներդրված կապիտալները: Փորձեցեք ժխտել, վոր այդպիսի հավասարեցման մեջ արտահայտվում է անհավասարաչափ զարգացման մեծագույն ուժեղացում: Հասկանալի չէ՞ Փինանսական կապիտալի «հավասարեցնող ճկունությունը և շարժունասական կապիտալի «հավասարեցնող ճկունությունը» արտահայտվում են վոր իզուր, այլ ներծծելու համար այն յերկրների կենսական հյուսվածքը, ուր նա արշավում է, ստրկացնելու գաղութները և կիսագաղութները:

Իհարկուք մի քանի թվեր այդ մասին: Լենինը «Իմպերիալիզմ»-ի մեջ նշում է, վոր 1898 թ. Անգլիայի յեկամուտը կապիտալի արտահանությունից կաղմում էր 100 միլիոն Փունտ ստերլինգ, վորը 5 անգամ գերազանցում էր նրա արաքին ատետրից ստացած յեկամուտին: Իսկ նոր հաշվարկումներով, որոնք 1929 թ. այդ դումարը հասավ մինչև 375 միլիոն Փունտ ստերլինգի, գերազանցելով արաքին ատետրից ստացված յե-

կամուտին 7 անգամ: ԱՄՆ-ը պատերազմից հետո անցան Անդլիայից այս «քառակուսի աստիճանի պարալիտիզմի» (Լե- նին) ասպարիզում և, որինակ, 1929 թ. ստացան այդ կարգի յե- կամուտ մինչև 1-186 միլիոն դոլլար, վորը համեմատած 1922 թ. հետ, աճ է տալիս 133%, այն ժամանակ, յերբ ժողովրդական յեկամտի ընդհանուր աճը կազմում էր ընդամենը 40%:

Ֆինանսական կապիտալը Հնդկաստանի, Չինաստանի և բո- լոր դաղուլթների ու կիսադաղուլթների աշխատավորների արյուն- քրտինքը շահի յե վերածում, աճեցնում է իր յեկամուտն այդ աշխատավորների գիշատիչ կեղեքման, անլուր տառապանքի, սո- վահարության հիմքի վրա: Ֆինանսական կապիտալը դաղուլթ- ների ու կիսադաղուլթների աշխատավորների տանջալից մահվան հաշվին է հղվանում: Ճապոնական Ֆինանսական կապիտալը հրով և թրով հարթեց իր ավելի հարսուտն ներխուժման ճանապարհը Մանջուրիայում: Այդ ներխուժմամբ ուժեղացած մակարդակի հավասարեցման տենդենցը ուղղակի արհավիրք է Մանջուրիայի ժողովրդի համար, վորովհետև նրա զիակների վրա յեն բարձ- րանում նորակառուցները, նրա գիակների վրայով են անցնում նոր յերկաթուղիները:

Սակայն, այն պայմաններում, յերբ վորպես իմպերիալիզմի հիմնական հատկանիշներից մեկը հանդես է դալիս աշխարհի տե- րիտորիալ բաժանման վերջացած լինելը, թեկուզ և նոր կապի- տալի եքսպորտի և նրանից համապատասխան յեկամուտ ապա- հովելու շուրջը չի կարող չբորբոքվել շահերի սուր բաղխում ան- հավասարաչափ դարգացող իմպերիալիստական յերկրների միջև:

Յեւ ահա, յերբ Ամերիկայի Միացյալ Նահանգները, վորոնք անհավասարաչափ դարգացման ուժեղացման և թռիչքաձևության հիման վրա այնպես արագ առաջ անցան Անդլիայից, մեծացնում են իրենց ինվենստիցիաները, ապա այդ, իհարկե, կատարվում է ի հաշիվ Անդլիայի, այսինքն՝ ի հաշիվ այն բանի, վոր նրանք իրենց տնտեսական հզորության շնորհիվ թափանցում են Անդ- լիայի դաղուլթային մոնոպոլիայի խորքերը:

Գաղտնիք չէ, վոր որինակ՝ անդլիական դոմինիոնում՝ Կա- նադայում, ամերիկյան կապիտալ ներդրումները դեռ վաղուց է վեր մի քանի անգամ գերազանցում են անդլիականին: Յեթե

Կանադան մյուս դոմինիոններից ավելի ակտիվ է բրիտանա- կան կայսրությունից անջատվելու տենդենցների մեջ, սրանում իհարկե, Միացյալ Նահանգների մատը խառն է, վորոնք իրենց տնտեսական ազդեցությամբ ներգործում են Կանադայի վրա և մղում դեպի անջատում:

Իգուր չէ, վոր Ամերիկայի Միացյալ Նահանգներում առաջ յեկավ Մոնրոյի տեսության նոր վարիանտ, վորի համաձայն Ամերիկան արդեն վոչ թե ընդհանրապես ամերիկացիների համար է, այլ Ամերիկայի Միացյալ Նահանգների:

Անդլիան, իհարկե, չէր կարող անտարբեր նայել ԱՄՆ-ի այդպիսի ախորժակների վրա, առանձնապես, յեթե նկատի ու- նենանք, վոր նրանք իրականության մեջ չեն սահմանափակվում լոկ կապիտալի եքսպորտի շրջանակներով, այլ վերաբերում են նույնպես ապրանքների վաճառահանման և հումուլթի հայթ- հայթման: «Վորչափ բարձր է կապիտալիզմի դարգացումը, — գրում է Լենինը, — վորչափ ուժեղ է զգացվում հումուլթի պա- կասությունը, վորչափ ավելի սուր է մրցակցությունը և հու- մուլթի աղբյուրների հետևից ընկնելն ամբողջ աշխարհում, այն- քան կատաղի յե դառնում պայթարը դաղուլթներ ձեռք բերելու համար»: Իսկ հայտնի յե, վոր, որինակ, ԱՄՆ-ի նախթի պա- շարը սպառնում է վերջանալ: Այդ պատճառով ևլ Մոնրոյի «ա- ուսձղական» տեսությունը ուղած մոմենտին կարելի յե բացատրել՝ որինակ՝ Հեռավոր Արևելքում ԱՄՆ-ի ունենալիք բացառիկ ազ- դեցության իմաստով, թեկուզ ճապոնիան այդ առթիվ հորինել արդեն իր սեփական «մոնրոիզմը», այն է՝ Ասիան ճապոնացի- ների համար: Իսկ մի՞թե այդպիսի ձգտումների հնարավորու- թյունը յերբեմնի հետամնաց ճապոնիայի կողմից՝ իր հերթին ցուցանիչ չէ, վոր կապիտալիզմի անհավասարաչափ դարգացումն իմպերիալիզմի շրջանում աննախընթաց կերպով ուժեղացել և սրվել է:

Բայց միայն բունի ճանապարհով, պատերազմի հրդեհի մեջ կարող են ստուգման յենթարկվել այդպիսի հակադիր տեսու- թյունները և պրետենզիաները: Սա ակներև կերպով ցույց տվեց առաջին իմպերիալիստական պատերազմը: Հակառակ այդ պատե- րազմի բնույթի և էյուլթյան մասին յեղած կաուցիլիական փարե-

նվիրել, ճգնել դանադան հաշիվները կատարումով լուրջ կերպաբանք տալ իր իմաստակութուններին և այդ կապակցութեամբ հրապարակ նետել իր տխրահուշակ լողունդը՝ «Յուրաքանչյուր հեռատես կապիտալիստ պետք է այսօր իր ընկերներին կոչ անի՝ կապիտալիստներ բոլոր յերկրները, միացե՛ք» («Имперализм», էջ՝ 18) :

Բայց կառուցելին հենց դրա համար էլ բուրժուազիայի խըրտվիլակն է, վորպեսզի ամբողջ իրականութեան, բոլոր փաստերի դեմ անդադրում շարունակի պաշտպանել ուլտրա-իմպերիալիզմի տեսութունը: Նա մարքսիզմի դեմ գրած թունալից իր պասկվիլում՝ «Պատմութեան մատերիալիստական հասկացողութունը» գրքում գրում է. «Հնարավոր է նույնպես, վոր Ֆինանսական կապիտալը համաշխարհային պատերազմի փորձից հետո շահագործման մարզերի ընդարձակման այդպիսի մեթոդները վտանգավոր համարի, վորովհետև շահույթ մեծացնելու այդպիսի ձգտման ժամանակ վտանգի յե յենթարկվում ամբողջ կապիտալը և թերևս ավելի ձեռնտու լինի անցնելու ուլտրա-իմպերիալիզմին, այսինքն՝ բոլոր յերկրները Ֆինանսական կապիտալի միջազգային կարտելացման» (Матер. поним. истории, էջ՝ 140) :

Այդպիսով, կառուցելին միայն յերգում է իր տերտերական մեղեդին՝ ուլտրա-իմպերիալիզմի դարաշրջանի հնարավորութեան մասին: Բուրժուազիայի ստորաբարձ ծառան չինայելով իր ուժերը՝ ձգտում է զինաթափ անել համաշխարհային պրոլետարիատին նոր համաշխարհային պատերազմի շարունակ աճող սպառնալիքի հանդեպ:

Չանադան ձևերով ուլտրա-իմպերիալիզմի մասին ողային ամբողջներ են կառուցել Հիլֆերդինգը, Ռենները և սոցիալ-Փաշիզմի մյուս տեսաբաններն ու պարագլուխները, անշուշտ, այդ նույն նպատակով, բանվոր դասակարգին պատրաստվող նոր համաշխարհային սպանդի առաջ անակնկալի բերելու համար:

Կապիտալիզմի անհավասարաչափ դարգացման որևէքը կատարում է և չի կարող չկատարել իր դերը, ասպարեզ են յելնում պատերազմ շնչող ու վորոճացող Հիտլերները, ասպարեզ են յելնում կառուցիլու և ընկ, ուլտրա-իմպերիալիստական մեղեդիները տակ և նրանց աջակցութեամբ: Չե՞ վոր սոցիալ-Փաշիզմն

իր բռնած ամբողջ դիրքով ու դործունեյութեամբ ճանապարհ հարթեց Հիտլերին:

Համաշխարհային պատերազմից հետո շարունակվող զարգացման անհավասարաչափութեան մասին պատկերացում կարելի յե կազմել թեկուզ 4 խոշորագույն իմպերիալիստական պետութունների տեղը բնորոշող հետևյալ աղյուսակից:

ԱՌԱՆՁԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՐԵՐԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՏԵՂԸ
(Արդյունաբերութեան արտադրանքի մեջ ունեցած իրենց կշռով)

Տ Ե Ղ	1913	1919 1920	1925 1929
1-րդ	ԱՄՆ	ԱՄՆ	ԱՄՆ
2-րդ	Գերմանիա	Մ. Բրիտանիա	Գերմանիա
3-րդ	Մ. Բրիտանիա	Գերմանիա	Մ. Բրիտանիա
4-րդ	Ֆրանսիա	Ֆրանսիա	Ֆրանսիա

Համաշխարհային տնտեսական կրիզիսը, ճիշտ է, ավելի շատ խոցեց ԱՄՆ-ին և Գերմանիային, սակայն բնավ չի կարելի ասել, վոր նա այս յերկրները դարգացման մեջ նոր տենդենց մտցրեց: Նման պայմաններում, իհարկե, լիակատար ուժի մեջ է մնում անգլո-ամերիկյան հակամարտութունը, վորը կոմիտեերնի ծրագրով բնութագրված է վորպես իմպերիալիստական պետութունների միջև յեղած հիմնական հակամարտութուն: Կապիթալիզմի անհավասարաչափ դարգացման որևէքի կամքով Անտանտին չհաջողվեց պատերազմի միջոցով յերկար ժամանակ հետ մղել իմպերիալիստական Գերմանիային: Վերջինս այժմ արդեն, հանձինս իր Փաշիստական պարագլուխների, մտմտում է քապանսիայի յերկրորդ վորձը կատարել պատերազմի միջոցով և նույնիսկ լիակատար յելք է տալիս Ռոզենբերգի խելագար Փանասովիաներին:

Դրան ավելացրեք անգլո-Ֆրանսիական, ամերիկա-ճապոնական, Ֆրանս-իտալական և այլ հակամարտութունները, վորոնք Փաշիստական Գերմանիայի սպառնալիքի առաջ կարող են այս կամ այն կերպարանքն ու չափն ընդունել, բայց վերանալ յերկամ աջ կիրառելով խաղաղութեան անչեղ ու հետևողական բեք: ԽՍՀՄ-ն կիրառելով խաղաղութեան անչեղ ու հետևողական քաղաքականութուն, խաղաղութեան գործում ներգրավելով այն

կապիտալիստական յերկրներին, վորոնք տվյալ ետապում շահագրգռված չեն խաղաղության խախտմամբ, վոչ մի ջանք չի խնայում առժամապես հեռացնել համաշխարհային նոր պատերազմի դառն բաժակն աշխատավոր մարդկությունից: Սակայն, կասկած չի կարող լինել այն մասին, վոր քանի դեռ գոյություն ունեն կապիտալիզմը և նրա անհավասարաչափ զարգացման որևէքը, հասարակական խաղաղության հնարավորության մասին կարող են ցնդարանել միայն կառուցիկներին, տրոցիկիստներին նման կապիտալիզմի ապոլոգետները:

XI

Տրոցիկին և Զինովյեվը, ինչպես տեսանք, կապիտալիզմի անհավասարաչափ զարգացման որևէքի մարքս-լենինյան մեկնաբանության դեմ իրենց ատամներն եյին կրճտեցնում: Սակայն ով չի ընդունում այդ որևէքն իր ամբողջ փճուկան նշանակութեամբ, նա ուլտրա-իմպերիալիզմի ջատագով լինելու հարցում հետ չպետք է մնա կառուցիկներից: Յեվ, մյուս կողմից՝ նա, իհարկե, պետք է ժխտի դրա հետ սերտորեն կապված, ավելին՝ դրանով պայմանավորված սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը մի յերկրում: Յեվ այդպես ել վարվում է հակահեղափոխական Տրոցիկին: Ի՞նչ է ներկայացնում իրենից Տրոցիկը՝ «Յեվրոպայի Միացյալ Նահանգներ—առանց միապետութեան, մշտական զորքի Միացյալ Նահանգներ—առանց միապետութեան» լողունը (տես «Война и революция» 2-րդ, էջ՝ 501), յեթե վոչ՝ ուլտրա-իմպերիալիզմի տեսութեան մի վարիանտ: Չե՞ վոր դրանով նա ընդունում է, վոր հնարավոր է Յեվրոպայի իմպերիալիստական գեղատիչներին խաղաղ համակցութեանն առանց զորքի և գաղտնի դիպլոմատիալի: Այդպիսի մի դրույթից ինչո՞ւ չի կարելի հետևեցնել ընդհանրապես ամբողջ աշխարհի միացյալ Նահանգների հնարավորութեան, ասել է թե՛ ամբողջացրած ուլտրա-իմպերիալիզմ:

Հայտնի յե, թե ինչպես տակավին ենգելւը ծաղրում եր Յեվրոպայի միացյալ Նահանգների գաղափարը, վորպես հենց բուրժուական հակահեղափոխական գաղափար: Նա Բեքելին ուղղած իր նամակի մեջ ընդգծելով, վոր պատերազմի ժամանակ սրբախոտարական ինտերնացիոնալիզմի սկզբունքից հրաժարվելը կոր-

ծանարար կլինի Գերմանիայի բանվորական շարժման համար, գրում եր. «Ել ի՞նչ է մնում բանվորական շարժման ինտերնացիոնալիզմից: Միայն թույլ հույս՝ նույնիսկ վոչ թե յեվրոպական բանվորների գործակցութեան վրա՝ իրենց ալատազրութեան համար մղվող պայքարում, վո՛չ, այլ «Ժողովուրդների միջազգային յեղբայրութեան» ապագայի վրա, խաղաղութեան լիզայի պարոն բուրժուակաների՝ «Յեվրոպայի միացյալ Նահանգների վրա» (Архив Т 1/6, էջ՝ 80):

Հայտնի յե, թե ինչպես Լենինը, յելնելով իմպերիալիզմի շրջանում կապիտալիզմի անհամաչափ զարգացման ուժեղացումից և սրումից, վորի վրա մենք կանգ առանք վերևում, գրում եր, վոր այդպիսի լողունը կլիներ «կամ անհնար կամ ունակցիոն», իսկ սեակցիոն՝ այն պատճառով, վոր դա ըստ եյութեան կարողործեր տվյալ իմպերիալիստական պետութեաններին դաշինքը կամ մի այլ իմպերիալիստական յերկրի ու խմբի դեմ և կամ պրոլետարական հեղափոխութեան ճակատի և նրա ուղեկի՛ ազգային հեղափոխական պատերազմների դեմ:

Ուլտրա-իմպերիալիզմի տեսութեան տրոցիկիստական մի այլ որինակ հանդիսանում այն «ուխանան», վոր ուղղված է Մեքիկայի Միացյալ Նահանգների հասցեյին և նրա իբր թե բացառիկութեանը: «Մեքիկայի կապիտալը,—գրում է Տրոցիկին,—այժմ իշխում, հրամայում է քաղաքականներին: Նա պատրաստվում է ճիշտ նույնպես հրամայել յեվրոպական բանկերին և տրեստներին՝ յեվրոպական բուրժուալիստիկ իր ամբողջութեամբ... Նա գնում է դեպի այդ: Նա կկտրտի շուկայի մասերը, նա կնորմավորի յեվրոպական Ֆինանսիստների և յեվրոպական արդյունաբերողների գործունեյութեանը... Նա կամենալիս է կապիտալիստական Յեվրոպային նստեցնել մթերաբաժնի (пак) վրա» («Европа и Америка», էջ՝ 21): Սա միակ բնորոշ տեղը չէ. ամբողջ գիրքն է լցված Մեքիկայի Միացյալ Նահանգների փառաբանութեամբ, վորպես «Յեվրոպայի տնորեն», «ամբողջ աշխարհի և նրա բախտի տեր»:

Բայց ինչո՞վ է վաս ուլտրա-իմպերիալիզմը «քեռի Սամի» թեի տակ, վորն այնպիսի հիացմունք է ներշնչել Տրոցիկուն: Յեվ յեթե նա փորձում է հրաժարվել ամեքիկայան ունեկատ Լուստոնի

համբույրից, ապա զա ուղղակի կեղծաւորութիւնն և յերկերեսա-
նիութիւնն և, վորովհետև նույնիսկ Լուստոնը համենայն դեպս
այդպէս բացահայտ և այդքան ցինիկ չի փառաբանել ԱՄՆ-ի բա-
ցառիկութիւնը: Մի՞թե արժե յերկար խոսել այն մասին, թե ինչ-
պէս յուրաքանչյուր ուր կապիտալիստական իրականութիւնը տա-
լիս և նորանոր փաստեր, վոր ուլտրա-իմպերիալիզմի այդպիսի
կառուցվածքը ևս պարզապէս խաղաքարտից պատրաստված
տնակ և: Յեթե «ամբողջ աշխարհի տերն» սպտակ և ստանու՛մ
ձապոնիայից Հեռավոր Արևելքում և առայժմ փաստորեն լուծ և,
չի համարձակվում վճռական քայլերի ձեռնարկել, ապա թեկուզ
հենց այդ միակ փաստն ասում և, վոր քեռի Սամի ուլտրա-իմ-
պերիալիզմը միայն Տրոցկու մերժան և: Իսկ միակ իրականն այդ
տեսակետից իմպերիալիզմի ժամանակ կապիտալիզմի տնտեսա-
կան և քաղաքական զարգացման անհավասարաչափութիւնն ու ժե-
ղացումն ու սրումն և, այդ անհավասարաչափ զարգացման ընդ-
հատողական, թուլեցած և մոլեղին բնույթը:

Մենք կանդ չենք առնի այստեղ ուլտրա-իմպերիալիզմի տե-
սութիւնն մի այլ որինակի վրա, վոր հրամցրեց ընկ. Բուխարի-
նը. դա հանրահայտ և: Յեւ իսկապէս, ի՞նչ բան և նրա «կադ-
մակերսված կապիտալիզմի» տեսութիւնը, յեթե վոչ ուլտրա-
իմպերիալիզմի հնարավորութիւնն ճանաչում, միայն թե վոչ հե-
տեողական ձևով: Չե՞ վոր առանձին յերկրներ յերսում «կադ-
մակերսված կապիտալիզմին» տրամաբանորեն չի կարող չհետևել
«կադմակերսված կապիտալիզմ» համաշխարհային մասշտաբով,
վորքան ել դրա մասին պարտադիր չհամարել բարձրագոյն խո-
սել ընկ. Բուխարինը:

Ի դուր չեր, վոր Լենինն անողոր կերպով քննադատում եր
Բուխարինին «իմպերիալիստական եկոնովիզմի» համար, դուր
իմպերիալիզմի համաշխարհային տրեստի արատրակցիայով տար-
ված լինելու համար: Չուր իմպերիալիզմի համաշխարհային
տրեստի այդ արատրակցիան չի կարող հիմք ունենալ, անհնար և՛
հենց իմպերիալիզմի շրջանում կապիտալիզմի զարգացման անհա-
վասարաչափութիւնն որենքի ներդրութիւնն ու ժեղացումով:

Պատահական չե, վոր ընկ. Բուխարինն անհողութիւնն եր
հանդէս բերում անհավասարաչափ զարգացման որենքի վերսու-

ծութիւնն նկատմամբ: Որինակ, նա հակահեղափոխական որոց-
կիզմի և Վլինովկեյականութիւնն իր քննադատութիւնն մեջ յեւ-
կեա չդարձրեց իր ժամանակին հենց Տրոցկու և Ջինովյեյի ո՛-
քնկ. կողմից անհավասարաչափ զարգացման որենքի վճռական
նշանակութիւնն իմպերիալիզմի շրջանում չընդունելու մոմենտը:
Իսկ մի՞թե վերջին հաշիով, նա ինքը՝ վորպէս աջ ուղղիցիայի
լիդեր, մի այլ ծայրից չհանդէս նույն այն տեսակետին, վոր իբր
թե անհնար և մի յերկրում հաղթականորեն կառուցել սոցիա-
լիզմը:

Այո, անհավասարաչափ զարգացման որենքի անտեսումից ու
ժխտումից անխուսափելի կերպով բխում և ուլտրա-իմպերիա-
լիզմի փառած տեսութիւնն ջատագովումը և մի յերկրում սոցիա-
լիզմի հաղթական կառուցման հնարավորութիւնն բացասումը:

Տրոցկին, Ջինովյեյը և ընկ., լենինյան-ստալինյան հանձա-
րեղ ուսմունքի պողպատակուտ ամբուլթիւնն վրա իրենց կատա-
րած խղճուկ վտանձութիւններով միայն իրենց կողերը ջար-
դեցին, դառնալով հակահեղափոխական բուրժուազիայի առա-
ջավոր ջոկատը, մինչև ականջները խրվելով սե հարյուրակա-
նութիւնն տղմի մեջ:

Յերկերեսանի սողունութիւնն իրենց իեշակ դարձրած Ջի-
նովյեյ-կամենեյական իմբակը ֆաշիստական տերրորիստական
մեթոդներով փորձեց թիկունքից հարվածել Լենինի-Ստալինի
կուսակցութիւնը՝ ընկ. Կիրովի սպանութիւնն նողկալի ակտով,
մինչև վերջը մերկացնելով այդպիսով իր հակահեղափոխական
դարձելի դեմքը և ջախջախիչ հակահարված ստանալով կուսակ-
ցութիւնն, ամբողջ բանվոր դասակարգի և աշխատավորութիւնն
միահամուտ կամքով:

Միայն կառուցիկներին, իհարկե, դուր չեկավ և դուր չեր կա-
րող դալ իրենց հողեկան վիժվածքներ ինքնա ջախջախումը:

Յեթե կառուցիւ ուլտրա-իմպերիալիստական ցնդարանու-
թիւնները խանդարեցին իր ժամանակին ջախջախելու իմպերիա-
լիզմի այնպիսի մի թույլ ողակ, վորպիսին հանդիսանում եր կա-
պիտալիստական Գերմանիան, ապա Լենինիզմն ունեցավ իր հաղ-
թական յերթը, վորի հետևանքով ընկավ իմպերիալիզմի թույլ
ողակներից մեկը՝ բուրժուական կալվածատիրական Ռուսաստա-

նը, և սոցիալիստական հեղափոխութիւնն իր անխորտակ հիմքերը հաստատեց աշխարհիցմեկ վեցերորդ մասում:

Համաշխարհային պատմական նշանակութիւն ունեցող հաղթանակները՝ «Ժողովրդի բանտ» հանդիսադրող նախկին ցարական Ռուսաստանում սոցիալիզմի կառուցումը, առաջին հնգամյակի ամիսը քան հաջող ավարտումը, յերկրորդ հնգամյակի հաղթական իրադրոծումը և հսկայական հեռանկարները՝ միջազգային պրոլետարիատի համար հանդիսանում են այնպիսի դասեր, վոր նա հեղափոխութիւններին և պատերազմներին յերկրորդ տուրում ալլըս թույլ չի տա կառուցկիներին և արոցկիներին արհեստական կերպով դանդաղեցնելու պատմութեան լոկոմոտիվի ընթացքը:

Հաղթական լենինիզմն ամիսը ու ամիսը խոր արմատներ և դցում շահագործվող աշխատավոր մարդկութեան մտքի և սրտի մեջ, աշխարհի բոլոր անկյուններում կուտում ու կոփում և համաշխարհային հեղափոխութեան նորանոր բանակներ, լենինյան կոմիտեերնի և համաշխարհային պրոլետարիատի հանճարեղ առաջնորդի, լենինի գործը շարունակողի՝ ընկ. Ստալինի ղեկավարութեամբ:



ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Տպված է

Պետ է լինի

ԵՁ

22—Յերբիվից 8-րդ տող—Ապա փորձեց հրաժարվել այնպիսի a la Տրոյկի «դժերից»

Ապա փորձեցք a la Տրոյկի հրաժարվել այնպիսի դժերից

34—Վերևից 15-րդ տող—խորհրդակցութիւններ

խորհրդածութիւններ

45—Յերբիվից 2-րդ տող—աշխատանքը նոր միջոցներով»

աշխատանքի նոր միջոցներով»

50—Վերևից 21—22-րդ տող—տենդենցիանցներ

տենդենց

« » 22—23-րդ » — »

« » 25—րդ » — »

52—Յերբիվից 9-րդ » —խթանելու

խթանելու

58—Վերևից 12-րդ տող—արդեն ամեն աճող

արդեն կապիտալիստական աճող

61—Վերևից առաջին տող—սոյա-սելի չի

անսոյաակի չի

66—Վերևից 6-րդ տող—տեղ և փնտուում

տեղ և փնտուում

66—Յերբիվից 6-րդ տող—շարունակութիւնն և

շարունակութիւնն և

67—Վերևից 6-րդ տող—կամ րնդհակառակը

ընդհակառակը

ԳԻՆԸ 1 ՈՒՒԲ.



Ա. Օվանիսյան
Ի վոքրոսսս
օ նոքրոմոքրոմ
րոզվոտոնո կոքրոտոլոզմո

Գոզ ՏՏՐ Արմոնոո, Զրոնոն, 1935 ր.

<< Ազգային գրադարան



NL0201762

